№ 88 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 5 **1895** ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍՎ 5 № 88

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, օգոստոսի 6-ին,

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՏԻՍԵԱՆԻ

մահվան տարեդարձի օրը, Վանքի մայր եկեղեցում, առաւօտեան 11 ժամին, տեղի կունենայ պատարագ և հոգեհանգիստ, որի մասին Մարիամ Սաֆանեան Խատիսեանը իր զաւակներով յայտնում է ազգականներին և ծանօթներին, որոնք կը ցանկան պատուել հանգուցեալի յիշատակը: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միակ միջոցը. Անդունդ է բացված. Փոխադարձ օգնութեան քաղաքականութիւն. Օրվայ հարցը. Անգլիական թագուհու գահական ճառը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մասնագրութիւն. Նամակ Բագդադից. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Անգլիայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Նամակ Թիւրքիայից. Ամեն մարդ իր գործին.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից.

ՄԻԱԿ ՄԻՋՈՑԸ

—

Վերջապէս Գլադստոնն էլ յայտնեց իր կարծիքը Հայոց Հարցի մասին, և յայտնեց որոշ կերպով, կարճան, խիստ բառերով:

Ամբողջ կէս տարի է Անգլիայի հետ միասին ամբողջ Եւրոպան և ամբողջ Հայաստանը սրտատրոփ սպասում է, թէ ինչ կասի օրվայ քաղաքական ամենամեծ հարցի մասին այն մարդը, որի հեղինակաւոր ձայնին վաղուց ի վեր սովորել է ականջ դնել քաղաքակիրթ Եւրոպան, և որը, սրանից մօտ քառորդ դար առաջ, իր զօրեղ խօսքով ստիպեց փշրել մի ուրիշ թշուառ երկրի՝ Բուլգարիայի սարկութեան շղթաները, որ տանջվում և արիւնաքամ էր լինում օսմանեան բռնաւորների ձեռքում ճիշդ այնպէս, ինչպէս այսօր Հայաստանը:

Սակայն, չը նայած Եւրոպայի ընդհանուր ցանկութեան, Գլադստոն չէր խօսում: Եւ ոչ միայն չէր խօսում, այլ ամեն անգամ առիթ եղած ժամանակ անգործ կրկնում էր՝ թէ պէտք է զգոյշ լինել, չը յափշտակվել, պէտք է նախ ուսումնասիրել, թէ արդեօք ճիշդ են Թիւրքաց բռնութիւնների մասին տարածված լուրերը, և ապա միայն կարծիք յայտնել...

Եւ նա չը յափշտակվեց, զգոյշ մնաց, սառնարիւնութեամբ ուսումնասիրեց փաստերը, և ամբողջ կէս տարի լռելուց յետոյ, —ահա հրապարակ դուրս եկաւ յուլիսի 25-ին, ամենամեծական ճառով...

Հաւատալ Թիւրքերի խոստումներին անկարելի է,—ասաց Գլադստոն,—ուստի մընում է դիմել միակ և վերջին միջոցին—սահմանադրական միջոցին:

Ոչ դիպլոմատական բանակցութիւնները, ոչ խնդիրքը, ոչ յորդորը, ոչ կաբինետային սպառնալիքը և ոչ էլ վերջապէս որ և է խօսք չէ ազդել և երբէք էլ չի ազդի օսմանեան պետութեան ղեկավարների վրա, որոնք իրանց համար արհեստ են շինել խաբել, խաբել և խաբել:

Մնում է դիմել վերջին միջոցին, և այդ միջոցը՝ մեծ ծերունու կարծիքով,—որն աւելի լաւ է ճանաչում Թիւրքաց կառավարութիւնը, քան ուրիշ որ և է քաղաքական գործիչ մեր ժամանակում,—պէտք է արտայայտվի իբրև ճնշում, ուրեմն այժով, զէնքի միջոցով...

Եւ անկասկած այն օրը, երբ երեք պետութիւնների պատերազմական նաւերը կը կանգնեն Ստամբօլի առաջ, և կը սպառնան ռմբակոծել սուլթանների մայրաքաղաքը, այդ նոյն օրը օսմանեան միապետը կը շտապի իսկոյն ստորագրել ամենալայն ըէֆօրմների ծրագիրն անգամ և նոյն օրը եւրոպական պետութիւնների ներկայացուցիչ-կոմիսարը ոտք կը դնէ Հայաստան:

Թիւրքը միայն այժի, զէնքի, թնդանօթի առաջ կարող է խոնարհվել:

Ուրիշ միջոց չը կայ:

ԱՆԴՈՒՆԴ Է ԲԱՑՎԱԾ

—

Զարմանալի հանելուկ չէ՞ միթէ, որ Հայոց հոգևորականութիւնը, որի ներկայացուցիչները ընտրվում են ժողովրդից, որը իր գոյութիւնը պահպանում է ժողովրդի համակրութեամբ և տուրքերով, որը իր հեղինակութիւնը պահելու համար խօսում է ժողովրդի անունից, այժմ ձգտում է սահմանափակել այդ նոյն ժողովրդի իրաւունքները, հեռացնել նրան այն հաստատութիւններից, որոնք ստեղծվել և զարգացել են ժողովրդի գործակցութեամբ:

Ինչո՞ւ մեր հոգևորականութիւնը ամեն կերպ ձգտում է ստորացնել ժողովրդին, հաւասարացնել նրան մի ստորադրեալի, որը պէտք է ընդունի հոգևորականութիւնը իբրև մի անպայման իշխանութիւն և կատարի նրա անձնարձակ կամայականութիւնները և քմահաճութիւնները:

Ահ՝ա ինչու: Որովհետև մեր հոգևորականութիւնը բոլորովին ուրիշ հակումներ և նպատակներ ունի, քան ժողովուրդն է ցանկանում: Որովհետև նա վախենում է ժողովրդի քննադատող, ստուգող և պահանջող իրաւասութիւնից:

Երբ ժողովուրդը և նրա ընտրեալները համերաշխ են, երբ ժողովրդից ընտրվածները կատարում են նոյն այդ ժողովրդի ցանկութիւնները, նրանք երբէք չեն կարող վախենալ ժողովրդից, նրա միջամտութիւնից, նրա կօնտրօլից: Մենք աւելի կասենք. այդպիսի ընտրեալները, իբրև ժողովրդական շահերի իսկական ներկայացուցիչներ—իրանք կը հրաւիրեն ժողովրդին աւելի սերտ, աւելի մօտ կերպով վերահսկու լինել թէ՛ հաստատութիւնների և թէ այդ հաստատութիւնների ղեկին կանգնած անձանց գործունէութեան:

Եթէ մեր հաստատութիւնները, մեր ընտրեալները, մեր հասարակական գործողները ջանք են գործ դնում բացառիկ իրաւունք ձեռք բերել իրանց համար, ազատ լինել ժողովրդի վերահսկողութիւնից և կօնտրօլից,—դա պարզ ապացոյց է, որ նրանք կարել են իրանց կապը ժողովրդի հետ, որ նրանք այլ կերպ են մտածում, քան ժողովուրդը, որ նրանց շահերը տարբեր են ժողովրդի շահերից, որ նրանց ու ժողովրդի մէջ մի անդունդ է բացված, որ քանի գնում աւելի խորանում և լայնանում է:

Եւ այդ անդունդը մի օր կը կլանի իր մէջ այդ իշխանասէր, հակաժողովրդական ձգտումները, որովհետև միայն ժողովուրդն է, որ մեր մէջ պահպանել է այս կամ այն հաստատութիւնը, միայն ժողովուրդն է, որ իր բարոյական ջանքերով և նիւթական տուրքերով կեանք և այժ է տուել այս կամ այն ներկայացուցչութեան:

Ով այդ մոռացել է, նա կը պատժվի:

ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ

—

Այն օրից, որ մեր երկիրը ընկաւ ռուսաց տիրապետութեան ներքոյ, հայ երիտասարդներ սկսեցին դիմել Ռուսաստանի մայրաքաղաքները և համալսարանական կենտրոնները՝ բարձրագոյն և միջնակարգ կրթութիւն ստանալու նպատակով:

Քառասնական թուականներին նրանց թիւը այնքան սահմանափակ էր, որ միմեանց օգնելու, միմեանց նպաստ մատուցանելու համար՝ մի կազմակերպութիւն ստեղծելու մասին լուրջ կերպով ոչ ոք չէր կարող մտածել. բայց յիսնական թուականների սկզբին, երբ ուսանողների թիւը զգալի կերպով աւելացաւ, երբ ուսանողների աղքատիկ կեանքի պահանջները սկսեցին լվել շատ կողմերից, միաք յղացաւ միմեանց օգնելու, միմեանց նիւթական նպաստ տալու գործը կանոնաւորել և դիմել մշտական հասոյթների, որոնց մէջ գլխաւոր տեղն էին բռնում ուսանողների պարբերական տուրքերը և տարվայ ընթացքում տրվող մի կամ երկու ներկայացումները:

Այս աշխատանքը լրանում է քառասուն տարի այն ժամանակից, երբ փոխադարձ օգնութեան գաղափարը իրագործումն ստացաւ Մոսկվայում և այնուհետև անընդհատ գործեց՝ տասնեակ սերունդների կըրթութեան գործը նիւթական ճնշող պայմաններից ազատելով:

Ուսանողական փոխադարձ օգնութեան կազմակերպութիւնը աւելի մեծ գործ կատարեց իր շրջանում, քան որ և է մի ուրիշ սահմանեալ միայն լսել ենք և կարդացել լրագիրներում...

Միտինգը պէտք է բացվեր ժամի $3^1/_2$-ին. ժամի երկուսին մենք եկանք կայարանը, հարց ու փորձով գտանք դահլիճը «Town Hall», որի շուրջը և մուտքի առաջը խռնված էր բազմամիլիոն հասարակութիւն, որից միայն տոմսակ ունեցողներին թոյլ էին տալիս ներս մտնել: Ժամը $2^1/_2$-ին մտանք դահլիճը, որը արդէն լի էր: Մեր տեղերը բռնելուց յետոյ ես սկսեցի դիտել շուրջս:

Դահլիճը փոքր էր, ի հարկէ խօսքի համեմատական նշանակութեամբ. այնտեղ հաղիւ տեղաւորվում էին 1000 հոգի... Ի նկատի առնելով որ շատ միտինգներում, որ լինում են ուրիշ դահլիճներում կամ Հայդ Պարկում, ներկայ են լինում տասնեակ հազարներ, այդ դահլիճը և հասարակութիւնը, ի հարկէ, փոքր էին: Ինչպէս հաղորդում են լրագիրները, որոնք արդէն տպել են միտինգի արձանագրութիւնը, մի քանի հազար հոգու մերժել են տոմսակ ուղարկել գրաւոր կերպով. էլ չենք խօսում բերանացի մերժումների մասին...

Մենք սպասում էինք ամեն րոպէ, ժամացոյցին նայելով և հաշուելով վայրկեանները: Ահա հետզհետէ դահլիճը բոլորովին լցվեց. ներս մտան տիկին Գլադստոնը դքսուհու Վեստմինստերի հետ, հայր Սիվլեն Գլադստոնը, Հերբերտ Գլադստոնը և մեծ ծերունու միւս ազգականները. շատ տեղերից լսվեցին ծափահարութիւններ...: Էլի մի քանի րոպէ և ահա ամբողջ հասարակութիւնը յուզվեց. թեթև շշունջից սկսվելով այդ յուզմունքը ամենամեծ ոգևորութեան և ծափահարութեան հասաւ: Երբ դահլիճի խորքերից երևաց ժամանակիս ամենամեծ մարդը, ամբողջ հասարակութիւնը անմիջապէս ոտքի կանգնեց և մի քանի րոպէ կեցցէների ու ծափահարութիւնների վերջ չը կար: Նրա կողքին գալիս էր Վեստմինստերի դուքսը, Grosvenor Comitee-ի փոխ-նախագահը, որի նախաձեռնութեամբ կայացել էր այդ միտինգը. յետոյ գալիս էին յայտնի Canon Maccoll-ը՝ «Englands responsability towards Armenians» գրքի հեղինակը, Բերեֆօրդի և Զէստերի եպիսկոպոսները, Անգլօ-հայկական ընկերութեան նախագահ Ստիվենսօնը և այլն: Հայերից նրանց հետ մտաւ Մանչէստրի հովիւ հայր Պարոնեանը և մի օտարական յայտնի հայ:

Չը նայած իր մօտ 86-ամեայ հասակին, Գլադստոնը գալիս էր շատ հաստատ քայլերով. երեսը զուարթ և առողջ տպաւորութիւն էր թողնում... Դժուար է ինձ նկարագրել նրա խմստուն տեսքը, նրա արտայայտիչ, խոր թափանցող աչքերը և մի և նոյն ժամանակ հանդիստ հայեացքը... Բայց ինչպէս ոգևորվեց այդ ծերունին, երբ սկսեց խօսել, ինչ շանթեր էր արձակում նա, ինչ կրակոտ էին դառնում հեռզհետէ նրա խօսքերը:

Նիստը բացեց Վեստմինստերի դուքսը, իբրև նախագահ, զեկուցեց մի քանի նամակներ, որ ստացված էին ընկերութեան անդամներից, որոնք չէին կարողացել ներկայ գտնվել միտինգին զանազան պատճառներով, բայց լիովին համակրում են նրա բոլոր նպատակներին,—ապա իր կողմից մի կարճ, բայց ազդու և համակրական ատենաբանութիւն անելուց յետոյ, Վեստմինստերի դուքսը յայտնեց, որ խօսքը պատկանում է միստեր Գլադստոնին:

Թողնելով հետևեալ նամակիս թէ Գլադստոնի և թէ միւս ատենաբանների խօսածի բովանդակութեան հետ ծանօթացնելը՝ այս անգամ ես կը հաղորդեմ ընթերցողին միայն իմ ընդհանուր տպաւորութիւնը՝ այդ միտինգի մասին:

Միտինգը տևեց ժամի $3^1/_2$—$5^1/_2$, այսինքն 2 ժամ, որից 1 ժամ 10 րոպէ խօսեց Գլադստոնը, իսկ մնացած ժամանակը միւս ատենաբանները: Հէնց առաջին խօսքերից նա տիրեց ամբողջ դահլիճին: Սեղմից սկսելով՝ նա քանի գնում աւելի սաստիկ ու զօրեղ ձայնով էր խօսում, երիտասարդական ոգևորութեամբ ոգևորվում, երբեմն դղրդեցնելով ամբողջ դահլիճը... Մինչ դա

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՑԻՑ

ԶԷՍՏԷՐԻ ՄԻՏԻՆԳԸ

—

Լ ո ն դ ո ն, յուլիսի 25-ին

Նամակս գրում եմ Զէստերի միտինգի անմիջական տպաւորութեան տակ: Այս րոպէիս միայն վերադարձայ այդ քաղաքից, որը գտնվում է Լ ո ն դ ո ն ի ց $4^1/_2$ ժամ հեռու:

Միտինգի մասին յայտարարված էր լրագիրներում մի քանի օր առաջ, բայց հէնց հետևեալ օրը յայտնվեց, որ տոմսակները համարեա վերջացած են (տեղի նեղութեան պատճառով մուտքը տոմսակներով էր). մեծ ջանքերով և ազդեցիկ անձանց չնորհիւ հաղիւ կարողացայ տոմսակ գտնել և այսօր առաւօտեան գնացի Զէստեր մի քանի ծանօթների հետ:

Սրտատրոփ սպասում էի այն րոպէին, երբ կը տեսնեմ «Մեծ ծերունուն», որի անունը այնքան ակնածութեամբ և սիրով պահում է իր սրտում ամեն մի հայ,—կը տեսնեմ նրան ամենահետաքրքիր պայմաններում, հայկական միտինգում, այն միտինգներից մէկում, որոնց մասին մենք՝ ռուսահայերս միայն լսել ենք և կարդացել լրագիրներում...

Միտինգը պէտք է բացվեր ժամի $3^1/_2$-ին. ժամի երկուսին մենք եկանք կայարանը, հարց ու փորձով գտանք դահլիճը «Town Hall», որի շուրջը և մուտքի առաջը խռնված էր բազմամիլիոն հասարակութիւն, որից միայն տոմսակ ունեցողներին թոյլ էին տալիս ներս մտնել: Ժամը $2^1/_2$-ին մտանք դահլիճը, որը արդէն լի էր: Մեր տեղերը բռնելուց յետոյ ես սկսեցի դիտել շուրջս:

Դահլիճը փոքր էր, ի հարկէ խօսքի համեմատական նշանակութեամբ. այնտեղ հաղիւ տեղաւորվում էին 1000 հոգի... Ի նկատի առնելով որ շատ միտինգներում, որ լինում են ուրիշ դահլիճներում կամ Հայդ Պարկում, ներկայ են լինում տասնեակ հազարներ, այդ դահլիճը և հասարակութիւնը, ի հարկէ, փոքր էին: Ինչպէս հաղորդում են լրագիրները, որոնք արդէն տպել են միտինգի արձանագրութիւնը, մի քանի հազար հոգու մերժել են տոմսակ ուղարկել գրաւոր կերպով. էլ չենք խօսում բերանացի մերժումների մասին...

Մենք սպասում էինք ամեն րոպէ, ժամացոյցին նայելով և հաշուելով վայրկեանները: Ահա հետզհետէ դահլիճը բոլորովին լցվեց. ներս մտան տիկին Գլադստոնը դքսուհու Վեստմինստերի հետ, հայր Սիվլեն Գլադստոնը, Հերբերտ Գլադստոնը և մեծ ծերունու միւս ազգականները. շատ տեղերից լսվեցին ծափահարութիւններ...: Էլի մի քանի րոպէ և ահա ամբողջ հասարակութիւնը յուզվեց. թեթև շշունջից սկսվելով այդ յուզմունքը ամենամեծ ոգևորութեան և ծափահարութեան հասաւ: Երբ դահլիճի խորքերից երևաց ժամանակիս ամենամեծ մարդը, ամբողջ հասարակութիւնը անմիջապէս ոտքի կանգնեց և մի քանի րոպէ կեցցէների ու ծափահարութիւնների վերջ չը կար: Նրա կողքին գալիս էր Վեստմինստերի դուքսը, Grosvenor Comitee-ի փոխ-նախագահը, որի նախաձեռնութեամբ կայացել էր այդ միտինգը. յետոյ գալիս էին յայտնի Canon Maccoll-ը՝ «Englands responsability towards Armenians» գրքի հեղինակը, Բերեֆօրդի և Զէստերի եպիսկոպոսները, Անգլօ-հայկական ընկերութեան նախագահ Ստիվենսօնը և այլն: Հայերից նրանց հետ մտաւ Մանչէստրի հովիւ հայր Պարոնեանը և մի օտարական յայտնի հայ:

Չը նայած իր մօտ 86-ամեայ հասակին, Գլադստոնը գալիս էր շատ հաստատ քայլերով. երեսը զուարթ և առողջ տպաւորութիւն էր թողնում... Դժուար է ինձ նկարագրել նրա խմստուն տեսքը, նրա արտայայտիչ, խոր թափանցող աչքերը և մի և նոյն ժամանակ հանդիստ հայեացքը... Բայց ինչպէս ոգևորվեց այդ ծերունին, երբ սկսեց խօսել, ինչ շանթեր էր արձակում նա, ինչ կրակոտ էին դառնում հեռզհետէ նրա խօսքերը:

Նիստը բացեց Վեստմինստերի դուքսը, իբրև նախագահ, զեկուցեց մի քանի նամակներ, որ ստացված էին ընկերութեան անդամներից, որոնք չէին կարողացել ներկայ գտնվել միտինգին զանազան պատճառներով, բայց լիովին համակրում են նրա բոլոր նպատակներին,—ապա իր կողմից մի կարճ, բայց ազդու և համակրական ատենաբանութիւն անելուց յետոյ, Վեստմինստերի դուքսը յայտնեց, որ խօսքը պատկանում է միստեր Գլադստոնին:

Թողնելով հետևեալ նամակիս թէ Գլադստոնի և թէ միւս ատենաբանների խօսածի բովանդակութեան հետ ծանօթացնելը՝ այս անգամ ես կը հաղորդեմ ընթերցողին միայն իմ ընդհանուր տպաւորութիւնը՝ այդ միտինգի մասին:

Միտինգը տևեց ժամի $3^1/_2$—$5^1/_2$, այսինքն 2 ժամ, որից 1 ժամ 10 րոպէ խօսեց Գլադստոնը, իսկ մնացած ժամանակը միւս ատենաբանները: Հէնց առաջին խօսքերից նա տիրեց ամբողջ դահլիճին: Սեղմից սկսելով՝ նա քանի գնում աւելի սաստիկ ու զօրեղ ձայնով էր խօսում, երիտասարդական ոգևորութեամբ ոգևորվում, երբեմն դղրդեցնելով ամբողջ դահլիճը... Մինչ դա

բարեգործական հաստատութիւն։ Շատ ուսանողներ կարողացան Մոսկվա գնալ և Մոսկվայում ուսանել, աչքի առաջ ունենալով այն օգնութիւնը, որ տալիս էր ուսանողական դրամարկղը։ Քանի՞ դէպքերում ուսանողը ամենադժուար և ծանր դրութիւնից ազատվել է շնորհիւ ուսանողական դրամարկղի։ Մի և նոյն ժամանակ ուսանողը իրան միայնակ չէր զգում հեռաւոր հիւսիսում, հաւատալով որ դժբաղդ օրերին նա նեցուկ ունի իր համար իր ընկերներին, նրանց համերաշխ օգնութիւնը։

Մոսկվայի ուսանողները աչքի առաջ ունենալով փոխադարձ օգնութեան մի այդպիսի մեծ անցեալ, այժմ ցանկանում են իրանց մի հաշիւ տալ, թէ ինչ է կատարվել այս քառասուն տարվայ ընթացքում, ով ուսանողներից երբ է ուսել, ինչպէ՞ս է վարել ժամանակին նպաստ հայթայթելու գործը, ո՞ւր է այժմ գտնվում, ի՞նչ է արել կեանքում և այլն։ Եւ այդ նպատակով նրանք ուղարկել են նախկին ուսանողներին ծրագիրներ մանրամասն հարցերով և խնդրում են, որ տեղեկութիւններ հաղորդեն ըստ կարելոյն մանրամասն։

Եթէ նախկին ուսանողները արձագանք տան այդ հրաւէրին, արդարև կարող են մեծ նիւթ մատակարարել՝ հետաքրքրական և ուսանելի եզրակացութիւնների համար։

ՕՐՎԱՑ ՀԱՐՑԸ

XXIV

Մի քանի հարիւր քաղաքական բանտարկեալների ազատութիւնը անկարագրելի բերկրութիւն տարածեց ամբողջ Հայաստանում, մի ծայրից մինչև միւս ծայրը։

Խեղճ ժողովուրդ։ Նա չէ յիշում և ոչ մի դէպք, որ ինքը յաղթած լինէր թիւրքաց բռնութիւնը, չէ յիշում և ոչ մի օր, երբ բանտի մութ խորշերից, կամ սոսկալի կախաղանից, կամ հեռաւոր աքսորավայրերից մէկը ազատվէր և դառնար կարօտ, գիշեր ցերեկ սպասող ընտանիքի գիրկը...

Եւ ահա այժմ, երբ երկար ամիսների վարդագոյն յոյսերից յետոյ՝ բանտերից ազատ օդի մէջ դուրս եկան մի քանի հարիւր տանջված, մաշված, ամեն տեսակ զրկանքների ենթարկված անմեղներ,—նա, այդ թշուառ զոհերի աւելի թշուառ մայրը՝ հայ ժողովուրդը չէ իմանում ինչ անի ուրախութիւնից, չէ իմանում ինչպէս յայտնի իր գոհունակութիւնը այն բռնաւորին, որ նոյն իսկ այդ բոլոր տանջանքների ստեղծողն է։

Տեսէք, թէ ուրեմն ինչքան քչապահանջ, ինչքան սակաւապէտ, ինչքան սահմանափակ ցանկութիւնների տէր է այդ ժողովուրդը, որ գիտէ անկեղծ կերպով ուրախանալ, հրճվել, ոգևորվել, երբ մի քանի հարիւր մարդիկ են ազատվում այն բանտերից, ուր կալանաւորված են ոչ թէ մի քանի հարիւր, այլ մի քանի հազար մարդիկ, ուր շատերը արդէն գտել են իրանց գերեզմանները, չը դիմանալով դժոխային տանջանքներին...

Թիւրքաց կառավարութիւնը աւելի քան 15 հազար հայ քաղաքական բանտարկեալներից ազատել է մի քանի հարիւր մարդ. այդ 15 հազար հոգուց մի քանի հազար արդէն զոհվել են բանտային անտանելի կեանքին,—բայց հայ ժողովուրդը էլի գոհ է, էլի ուրախանում է, էլի գոհունակութեան ցոյցեր է անում...

Եթէ հայի փոխարէն լինէր մի ուրիշ ժողովուրդ, մի ուրիշ աւելի պահանջող ազգ, նա երբէք չէր բաւականանայ այդ փշրանքներով, որ թիւրքերը գցում են նրա առաջ, և նոյն իսկ անասելի բողոք կը յարուցանէր...

Բայց հայը, այդ համբերող, դիմացկուն, քաղաքական փոթորիկներից խուսափող ժողովուրդը քչով էլ է բաւականանում. նա գոհ է, երբ նրան տալիս են զէթ մի հարիւրերորդ մասը այն բոլորի, ինչ նրա իրաւունքը, նրա մարդկային սեփականութիւնը, նրա անխլելի արտօնութիւնն է։

Սակայն օսմանեան կառավարութիւնը այնքան հրէշաւոր, այնքան քարասիրտ, այնքան բթամիտ է դարձել, որ չէ կարողանում գոհացնել այդ տեսակ ժողովրդի ամենաչափաւոր պահանջներն անգամ։

Խ. Մալումեան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ԳԱՀԱԿԱՆ ՃԱՌԸ

(Ռուսաց գործակալութեան հեռագիր)

Լոնդոն, 4 օգոստոսի։ Պարլամենտում կարդացված գահական ճառի մէջ ի միջի այլոց ասված է՝ թագուհին ստացել է օտար պետութիւններից յայտարարութիւններ՝ անփոփոխ բարեկամական յարաբերութեան դէպի Անգլիան։ Ոչ մի տեղ չէ ծագել միջազգային որ և է բարդութիւն, որ Եւրոպայի խաղաղութեան սպառնար։

Թագուհին յոյս ունի, որ Զինաստանի և Եգիպտոսի մէջ կնքված հաշտութիւնը տեղական կը լինի։ Պատերազմի ժամանակ Անգլիան անպայման չեզոքութիւն պահեց։ Թագուհին ցաւ է յայտնում այն վրդովիչ սարսափների մասին, որոնց ենթարկվեցան անգլիական միսիոնարները Ֆուչիէն նահանգում։

Գահական ճառում յիշված է Հայաստանում կատարված սարսափների մասին, որոնք գրգռեցին քրիստոնեայ ազգերի, մանաւանդ Անգլիացոց զայրոյթը։ Թագուհին անհամբեր սպասում է սուլթանի վճռին այն բէֆորմների վերաբերութեամբ, որոնք առաջարկված են Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի համերաշխ գործող դեսպանների կողմից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրատարակչական ընկերութեան տպագրութեամբ լոյս տեսաւ մի բնագիտական գիրք, «Նախագիտելիք բուսաբանութեան» վերնագրով, աշխատութիւն Ալէքսանդր Քիշմիշեանի։

Գրքի բովանդակութեան և նպատակի մասին ճիշդ գաղափար է տալիս հեղինակը իր առաջաբանի հետեւեալ խօսքերով. «Տալ գիտութեան վերաբերեալ փաստեր, առանց մանրակրկիտ և դժուար հասկանալի բացատրութիւնների և հարստացնել լեզուագիտութեան պաշարը, սովորեցնելով մանուկին նորանոր բառեր և օճեր»։

Գրքի մէջ մեծ ուշադրութիւն է դարձրած բազմաթիւ տեղեկութիւններ հաղորդելու, արտաքին նկարագրութիւնների, անունների և տերմինների շատութեան, նոյն իսկ զանազան ատանդութիւնները պատմելու վրա, քան գիտութեան հիմքերը պարզող հասկացողութիւնների և ընդհանուր օրէնքների վրա, որոնք միայն հնարաւոր են դարձնում բազմազան փաստերի կապակցութիւնը և իւրացումը։ Բուսաբանութեան, ինչպէս և ամեն մի բնական գիտութեան դասաւորութեան նպատակը պէտք է լինի զարգացնել աշակերտի մէջ քննական հայեացք, գիտողութիւն և ուղիղ աշխարհայեցողութիւն բնութեան մասին. այդ պատճառով ցանկալի է ոչ փաստերի քանակութիւնը, այլ որակութիւնը։ Առանց ղեկավարող գաղափարների ատանդած անթիւ տեղեկութիւնները միայն ծանրաբեռնում են յիշողութիւնը և չունեն կրթիչ և զարգացուցիչ նշանակութիւն։

Օրինակի համար, բոյսերի գործարանների և նրանց զանազանակերպութեան մասին տուած նիւթը անհամեմատ աւելի դիւրին կերպով կարելի էր ատանդել, հիմնվելով մեատամորֆոզի օրէնքի վրա և պարզ, հասարակ ձևերից սատիճանաբար դէպի բարդը գնալով։ Նոյնպէս պէտք է խոյս տալ բնական գիտութեան մէջ «հաւատքի» վրա հիմնված բացատրութիւններից, և փոխարէնը խիստ անալիզի ենթարկել և անհերքելի փաստերով և փորձերով ապացուցանել ամեն մի բան։

Գիրքը կազմված է Պոլ-Բէրի «Նախագիտելիք կենդանաբանութեան» ծրագրով և ուղղութեամբ. նոյն իսկ մի քանի տեղ, (օրինակ Ա. դաս) փոխադրութեամբ։ Սակայն Պոլ-Բէրը աւելի քիչ է կուտակում տեղեկութիւններ ու անուններ և աւելի կենդանի, թեթև ոճով է պատմում։

Առհասարակ, դասագրքերի համար այդ սիստեմը այնքան նպատակայարմար չէ, որչափ Գերդի սիստեմը, որը էվոլիւցիան ղեկավարող հիմք ընդունելով՝ պարզ, հասարակ ձևերից և երևոյթներից սատիճանաբար տանում է աշակերտին դէպի աւելի բարդը։ Գերդի համար էլ բնական գիտութեան ուսուցման գլխաւոր նպատակը—ուղիղ աշխարհայեցողութեան կազմակերպելն է։

Մենք համոզված ենք, որ նոյն իսկ փորձը կը ցոյց տայ, որ այս «Նախագիտելիք բուսաբանութեան» գիրքը, իբրև դասագիրք, դժուար գործածելի է, բայց իբրև օժանդակ ձեռնարկ կամ ընթերցանութեան լրացուցիչ գիրք, անկասկած կը լինի օգտակար։

Գրքի վերջին կցված է բուսաբանական հարուստ բառգիրք՝ ռուսերէն և լատիներէն համեմատական անուններով։ Հրատարակութիւնը թէև զարդարված է նկարներով, բայց չը կան շատ կարևոր պատկերներ, օրինակ, մանրադիտական կազմութեան վերաբերեալ և մի քանի տիպիկական բոյսերի պատկերներ։ Գրքի գինն է 80 կ.։

Լ.

ՆԱՄԱԿ ԲԱԴՈՒԻՑ

—

Ցուլիսի 28-ին

Երկու շաբաթից աւելի է, որ այստեղ՝ հասարակութեան բոլոր շրջաններում պատում է հրէշաւոր մի լուր։ Լուրը պատմում են հազար ու մի վարիացիաներով, սակայն իսկութիւնը, այնու ամենայնիւ, մնում է ապացոյցի կարօտ։ Որքան աշխատեցինք, անկարող եղանք բուն եղելութիւնը իմանալ։ Այսպէս թէ այնպէս, այսօր նոյն իսկ լրագրութեան նիւթ է դարձել այդ լուրը և խօսակցութեան առարկայ։

Տեղական «Каспій» լրագիրը այդ լուրը մի շաբաթ առաջ ձևակերպեց այսպէս. «Մահաղահաս մի կին դիմում է մի ընտանիքաւոր երիտասարդ բժիշկ-մանկաբարձի՝ իր հիւանդութեան մասին խորհրդակցելու համար։ Բժիշկ-մանկաբարձը օգուտ քաղելով դէպքից... որպէս թէ երդմնազանց է գտնվում և կրքից կուրացած՝ ձգտում է հիւանդ կնոջ պատիւը չշաւաղելու։ Կինը ընդդիմադրում է և կուում, չանգատում է գաղտն ախոյեանի երեսը, օգնութիւն է կանչում, բայց այնու ամենայնիւ ընկճվում է... յաղթութիւնը մնում է «գիտութեան ներկայացուցչի» կողմը։ Անպատուած կինը, իբրև թէ պատմում է եղելութիւնը իր ամուսնուն. վերջինս վրէժխնդրութեամբ վառված՝ նախ ջարդում է անպատկառ ախոյեանի կողերը, ապա գործը յանձնում պրոկուրօրին»։

Լրագրի այս որոշ ծանուցումից յետոյ՝ ամենքս սրտատրոփ սպասում էինք գործի վախճանին. հաւատացած էինք, որ գործը կը պարզաբանվի, ընտութիւնը կը տայ իր վճիռը և հրէշ բժիշկը իր արժանի պատիժը կը կրի։ Բայց զուր յոյս էր։

Նոյն լրագրի հետեւեալ համարում լոյս տեսաւ տեղական պրոկուրօրի նամակը, որով յայտարարում էր նա՝ գիտութիւն հասարակութեան, թէ այդ գործի վերաբերեալ որ և է զանգատ չէ ներկայացվել, և թէ ինքը այդ մասին բոլորովին տեղեկութիւն չունի։

Այդ օրից յետոյ շաբաթներ են անցել, ժողովուրդը ականջները սրած՝ ուզում է իմանալ, թէ ով է մանկաբարձ-բժիշկը, ճանաչել «մարդկութեան այդ բարերարին». ամենքը հետաքրքրվում են, նոյն իսկ թուրքերը ծիծաղում և ծաղրում են, խօսվում է նրա յայտնած մտքերի և ցոյց տուած տակտի մասին։

—

Անցեալ նամակումս գրել էի, որ «Բէյտէրի» գործակալութիւնը հակասական տեղեկութիւն է տուել Բ. Դրան վերջին պատասխանի մասին։ Բայց երէկ և այսօր «Բէյտէրը» ուղղեց իր սխալը և հաստատեց «Daily News»-ի հաղորդածը Դրան պատասխանի անբաւարար լինելու մասին։

Ահա այսօրվայ Բէյտէրի հեռագիրը Վիէննայից. «Կ. Պոլսից եկած հաստատ տեղեկութիւններին նայելով՝ ֆրանսիական և ռուսաց դեսպանատներում Բ. Դրան պատասխանը՝ պետութիւնների կողմից ներկայացրած բէֆորմների ծրագրի վերաբերմամբ՝ անբաւարար է համարվում։ Երկու դեսպաններն էլ այն կարծիքի են, որ պատասխանը անընդունելի է և որ պետութիւնները այդքան հեռու գնացած լինելով այդ խնդրում՝ պէտք է չարունակեն իրանց ջանքերը՝ իրանց առաջադրութիւնների համար համաձայնութիւն ստանալու։ Յամենայն դէպս, որքան կարելի է եզրակացնել ներկայ հանգամանքներից՝ թվում է թէ ոչ Ֆրանսիան և ոչ Ռուսաստանը դիտաւորութիւն չունեն բաժանվել Մեծ-Բրիտանիայից այս խնդրում»։

Յ. Քոչարեանց

86-ամեայ ծերունի է, մտածում էր ակամայ ունկնդիրը, ինքը իրան չը հաւատալով... Բուռն ծափահարութիւնները և hear, hear ձայները անընդհատ ընդմիջում էին նրան, և նա չարունակում էր աւելի եռանդով, աւելի մեծ այժով...

Գլադստոնի գլխաւոր միտքը նախ այն էր, որ հայկական հարցը ոչ թէ մի կուսակցական խնդիր է, մի միտք, որ յայտնեց և Վեստմինստերի դուքսը (tory), ոչ թէ կրօնական խնդիր է,—ոչ, դա «մարդկութեան» խնդիր է (humanity)։ Ապա նա առաջ բերեց հետեւեալ որոշումը, որը յետոյ ժողովը միաձայնութեամբ ընդունեց. «Ներկայ «միտինգը յայտնում է իր համոզմունքը, որ նո«րին մեծութեան կառավարութիւնը իր կողմը կու«նենայ ամբողջ ազգի սրտագին աջակցու«թիւնը, ձեռնարկելով այնպիսի միջոցների, որոնք «կարող կը լինեն ապահովել թիւրքաց Հայաստանի «ժողովրդի համար այնպիսի բէֆորմներ երկրի «վարչութեան մէջ, որոնք իսկապէս կերաչխա«ւորեն կեանքի, պատուի, կրօնի և սեփականու«թեան ապահովութիւն,—և որ ոչ մի բէֆորմ «ոչինչ իսկական նշանակութիւն չի ունենայ, «եթէ նա դրված չէ եւրոպական մեծ պետու«թիւնների մշտական կոնտրոլի տակ»։

Իր այս առաջարկը պաշտպանելու համար Գլադստոնը երկար կանգ առաւ հայերի արդի սարսափելի դրութեան վրա, որը հաստատելու համար նա մատնացոյց արեց Դիլլոնի գրուածքների և յատկապէս նրա վերջին ընդարձակ յօդուածի վրա, որը դուրս է եկել «Contemporary Review»-ի օգոստոսի համարում, որից Գլադստոնը հէնց ժողովում մի կտոր կարդաց։ «Կողոպուտ, սպանութիւն, առևանգութիւն և հալածանք»—(Plunder, murder, rape and torture)—ահա այդ չորս խօսքը, Գլադստոնի ասելով, բնաորոշում են թիւրքաց կառավարութիւնը Հայաստանում, մի կառավարութիւն, որին Գլադստոնը անուանում է «The worst government on the face of the earth» (ամենաւատ կառավարութիւնը աշխարհիս երեսին)։

Ապա պատմական տեղեկութիւն տալով հայկական հարցի մասին, Գլադստոնը յոյս յայտնեց, որ եւրոպական պետութիւնները և մասնաւորապէս լորդ Սալսբիւրի ամեն ջանք գործ կը դնեն վերացնել իրերի այդ դրութիւնը թիւրքաց Հայաստանում։ Իր ճառի հէնց սկզբից Գլադստոնը յայտնեց, որ ինքը բոլորովին ցանկութիւն չունի դժուարութիւն պատճառել կառավարութեանը, այլ ընդհակառակը՝ աւելի այժ տալ նրան Անգլիայի ձեռնարկած պատուաւոր գործը գլուխ բերելու համար, ուրիշ պետութիւնների հետ միասին։

Եւ այս բանը ընդունում են բոլոր պահպանողական թերթերը ևս։ Օրինակ, «Times» լրագիրը գտնում է, որ Գլադստոնը չատ մեծ իմաստութեամբ հրաժարվեց մասնակցել հայկական խնդրի համար եղող ագիտացիայի գործում մինչև այն ժամանակը, երբ այդ կարող էր ընդունվել իբրև կուսակցութեան ծառայող խնդիր, իսկ համաձայնվեց խօսել այժմ, երբ ընտրութիւնները վերջացան և կառավարութիւնը ունի նշանաւոր մեծամասնութիւն...

Երկարատև և կրկնակի ծափահարութիւնները պատկեցին այդ ճառը։ Նրանից յետոյ խօսեցին հերթով միւսները, որոնք մասամբ կրկնում էին Գլադստոնի մտքերը, մասամբ աւելացնում էին նոր կողմեր...

Այդ ճառերի ամփոփումը, ինչպէս և Գլադստոնի ճառի թարգմանութիւնը կուղարկեմ վաղը։

Վերջացաւ միտինգը. նոյն անվերջ ծափահարութիւնները յայտնվայս։ Ծերունին վերկացաւ իր բազկաթոռից և խռնված ամբոխի միջով դուրս եկաւ դահլիճից։ Ցոյցի աղաղակները նրան հետևում էին մինչև փողոց, որտեղ ամբողջ քաղաքը հաւաքված սպասում էր նրան։ Երկիրը կարծես դղրդաց ամբոխի ձայնից։ Ծերունին իր կնոջ և ընտանիքի հետ նստեց կառքը և կեցցէների ուղեկցութեամբ՝ գնաց Հօվարդէն, որը մի քանի մղոն հեռաւորութեան վրա է այդտեղից... Այդ վեհ տպաւորութեան տակ ես վերադարձայ տուն, և ահա, առանց հանգստանալու, գրում եմ նամակս։ Բոլոր լրագիրները արդէն տպել են Գլադստոնի ճառը և առաջնորդողներ նուիրել նրան, որոնց մէջ մեծ համակրութեամբ խօսվում է նրա յայտնած մտքերի և ցոյց տուած տակտի մասին։

—

Անցեալ նամակումս գրել էի, որ «Բէյտէրի» գործակալութիւնը հակասական տեղեկութիւն է տուել Բ. Դրան վերջին պատասխանի մասին։ Բայց երէկ և այսօր «Բէյտէրը» ուղղեց իր սխալը և հաստատեց «Daily News»-ի հաղորդածը Դրան պատասխանի անբաւարար լինելու մասին։

Ահա այսօրվայ Բէյտէրի հեռագիրը Վիէննայից. «Կ. Պոլսից եկած հաստատ տեղեկութիւններին նայելով՝ ֆրանսիական և ռուսաց դեսպանատներում Բ. Դրան պատասխանը՝ պետութիւնների կողմից ներկայացրած բէֆորմների ծրագրի վերաբերմամբ՝ անբաւարար է համարվում։ Երկու դեսպաններն էլ այն կարծիքի են, որ պատասխանը անընդունելի է և որ պետութիւնները այդքան հեռու գնացած լինելով այդ խնդրում՝ պէտք է չարունակեն իրանց ջանքերը՝ իրանց առաջադրութիւնների համար համաձայնութիւն ստանալու։ Յամենայն դէպս, որքան կարելի է եզրակացնել ներկայ հանգամանքներից՝ թվում է թէ ոչ Ֆրանսիան և ոչ Ռուսաստանը դիտաւորութիւն չունեն բաժանվել Մեծ-Բրիտանիայից այս խնդրում»։

Յ. Քոչարեանց

որ միամիտ կերպով մեր կանանց, մեր քույրերին «միայնակ» ուղարկում ենք այդ տեսակ էսկուլապների մոտ...

Այդ ծիծաղը, այդ ծաղրը, այդ ընդհանուր հեռաքրքրությունը աղեցություն չեն գործում միայն տեղական բժիշկների բթացած նեարդների վրա։ Այս մարդիկ զարմանալի անտարբեր են. նրանք, կարծես, երկնքումն են ապրում, կարծես իրանց պատիւը, իրանց վարկը չէ չոչափվում։ Մինչև այժմ ոչ մի ձայն, ոչ մի բողոք տեղի չէ ունեցել նրանց կողմից։ Փոխանակ միացեալ ոյժերով միջոցների ձեռնարկելու, մի անգամ ընդ միշտ պարզաբանելու խնդիրը, կամ այդ տեսակ էսկուլապ-կոլլեգաներին յանուն գիտության դուրս շպրտելու ոչ միայն իրանց՝ բժիշկների, այլ և բոլոր շրջաններից, կամ տեղն ու տեղը ջրելու այդ տեսակ լուրերը և հասարակության իրաւացի բողոքին բաւարարություն տալու,—ձեռքերը ծալած՝ ապշած նստած են։ Ինչով բացատրել, ինչ անուն տալ այդ անտարբերություն։

Եւ դեռ մենք իրաւունք ենք համարում մեղադրել ամբոխին, որ նա բժիշկներին չէ հաւատում, ծաղրում ենք հասարակ դասակարգին, որ դալլաքների օգնություն է դիմում, զարմանում ենք, որ մեր կանայք, մեր քույրերը ճիշդ չեն խոստովանում իրանց հիւանդությունը բժիշկներին և չեն ցույց տալիս իրանց ցաւոտ տեղերը...

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Յուլիսի 26-ին

Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեզ մոտ օրվայ խնդիրը հայկական բէֆորմների խնդիրն է։ Հասարակությունը լարված ուշադրությամբ հետևում է լրագրության և նրա յոյսերը, լրագրական տեղեկությունների համեմատ, կամ աւելի վառվում և կամ սառչում են։ Շաբաթվայ ընթացքում քանի քանի յուսադրական և յուսահատական բոլշեներ են յաջորդում միմեանց՝ մեկը միւսին խորտակելով...

Այս տարի հունձը մեզանում չատ առատ է, այնպէս որ այս բոլշիս դարիի սօմարը 4 ռուբլով է ծախվում։ Ցույս կայ, որ մեր գիւղացիների նիւթական դրությունը այս ձմեռ լաւ լինի։ Մի կողմից հունձի առատությունը, միւս կողմից Թիֆլիսից Կարս չինվելիք երկաթուղու գծի աշխատանքները բաւական լաւ ապագայ են խոստանում մեզ։

Մեր քաղաքում մեծ կարիք կայ մի գրադարան-ընթերցարանի, կամ գէթ մի գրադարանի. 30 հազար բնակիչ ունեցող մի քաղաք, որի բընակիչները համարեա, կարելի է ասել, բոլորը հայեր են, հասկանալի է ինչ մեծ կարիք կայ այդ հիմնարկությունների մէջ։ Անցուշտ հայոց Բարեգործական ընկերությունը ի նկատի կառնի այս հանգամանքը և ամեն կերպ կաշխատի մի գրադարան էլ այստեղ բանալ։

Ամսիս 25-ին Մալխասեանի տպարանի բոլոր բանվորները գործադուլ էին արել, գործադուլի պատճառը ռոճկի քչությունը և անկանոն վճարելն է։ Ինչպէս ասում են, բանվորները ուր հարկն է բողոք են տալու, որպէս զի իրանց հասանելիք օրավարձերը ստանան։ Այդ տպարանում բանվորները ստանում են ամսական 3—12 ռուբլի։ Օրական բանում են 14—16 ժամ։

Ա. Խաժ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յուլիսի 10-ին

«Մշակ» լրագրի № 58-ում Մոզդոկից սխալ տեղեկություններ էին հաղորդված։ Ուսուցիչների մասին գրուածքը ամբաստանություն համարելով՝ խնդրում ենք «Մշակի» մոտակայ համարներից մեկում տեղ չնորհէք այս կարճ բացատրությանը։

Մոզդոկի գիմնազիաներում 5 տարի է ոչ մի խռովություն չէ եղել, այդ կարող է վկայել ամեն մի ճշմարտասէր մոզդոկցի։

Ուսուցիչները ոչ մի բարի խրատից ու նկատողությունից խրատող չէին, որ այդ պատճառով հրաժարվէին իրանց պաշտօնից։ Հրաժարվելու պատճառը եկեղեցում և յատուկ կազմած հրապարակային ժողովում զրպարտելն ու վիրաւորանքների ենթարկվելն է եղել։ Ահաւասիկ սրա հետ ներկայացնում եմ յարգելի խմբագրությանը պաշտօնական յայտարարության պատճէնը, որից ինքներդ կարող էք այդ բանը ստուգել։

Ս. Շահանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Օրդուբաթ, յուլիսի 10-ին

Անցեալ յունիսի 25-ին տեսվեց իմ մեռաքսի գործարանների քանդիդատակը։ Բազմաթիւ հեռագիրներ և համակրական նամակներ պարզ ցույց տուին այն համակրությունը, որով վերաբերվեց հասարակությունը դէպի իմ արդիւնաբերական գործունեությունը։ Անկարող լինելով մի առ մի պատասխանել այդ բոլոր հեռագիրներին և նամակներին, խնդրում եմ թոյլ տալ «Մշակի» միջոցով յայտնել իմ խորին և անկեղծ շնորհակալություններս բոլոր այն յարգելի անձանց, որոնք ուշադիր եղան դէպի իմ համեստ գործունեությունը։

Օրդուբաթի մեռաքսի գործարանների տէր՝
Կարապետ Բարաեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթ ու կէսից։

—

Օգոստոսի 3-ին Թիֆլիսի նահանգական դատարանը հաստատեց «Մշակի» հանգուցեալ հրատարակիչ տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեանի կտակը։ Համաձայն այդ կտակի, պրոֆէսոր Անդրէաս Արծրունին արդէն մտաւ իր իրաւունքների մէջ։

—

Մենք ստացանք Պետերբուրգից, օգոստոսի 2-ից հետևեալ հեռագիրը. «Յայտնում ենք մեր խորին վիշտը անմոռանալի կնոջ, «Մշակի» անխոնջ աշխատակցուհու, հայ ժողովրդի իրաւունքների համարձակ պաշտպանի մահվան առիթով։ Ուսանողների մի խումբ»։

—

Օգոստոսի 2-ին, տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեանի մահվան առիթով, Լոնդոնից ստացանք հետևեալ հեռագիրը. «Յայտնում եմ խորին ցաւակցություն խմբագրությանը։—Բոչարեան»։

—

Կ. Պոլսից ստացած մեր վերջին տեղեկությիններից երևում է, որ հայոց պատրիարքարանին աջողվեց խորտակել թիւրքաց կառավարության մի խումբ ստորաքարշ, դաւաճան հոգևորականների նենգամիտ դիտաւորությունները, և առաջ մղել Ալէքսէեանի կաթողիկոսության ընտրությունը։ Համաձայն Կիլիկիայի ժողովրդի ցանկության, Ալէքսէեան կուղևորվի Սիս և այնտեղ էլ կօծվի։ Այդպիսով ուրեմն, Իզմիրլեանի հակառակորդների և թիւրքաց կառավարության ագենտների բոլոր ստոր դիտաւորությունները օդը ցնդեցին։

—

Որպէս զի մի ամիսի դաղափար տանք թէ ինչ բան է Կ. Պոլսի Իզմիրեան կոչված մրցանակաբաշխությունը և ինչ տեսակ անձեռնհաս անձերից է բաղկացած յանձնաժողովը, մենք արտատպում ենք այսօր «Հայրենիք» լրագրից Լեոն Բաշալեանի գեղեցիկ յօդուածը այդ հանդիսի և յանձնաժողովի մասին։ Եւ միթէ այդ բոլորից յետոյ պէտք է զարմանալ, թէ ինչու փոքր ի չատէ բանիմաց և ձեռնհաս գրական մարդիկ խուսափում են ներկայացնելու այդ յանձնաժողովին իրանց հեղինակությունները, երբ «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանի» պէս հաւաքածուն, որի վերաբերմամբ Գիւտ քահանան հանդիսանում է լոկ հաւաքող և խմբագրող, արժանանում է մրցանակի, իբրև ինքնուրոյն գրուածք։ Եւ որքան ընկած պէտք է լինի Կ. Պոլսի հայ մամուլը ևս, որը, ինչպէս «Արևելք» լրագիրը, դեռ համարձակվում է անագին ներբողներ գրել յանձնաժողովի խայտառակ գործունեության մասին, գործունեություն, որ հիմնված է լոկ խնամության և ազգային ֆանատիկոսության ու կրօնի խտրության գաղափարի վրա։

—

Մեզ ուղարկված է տպագրելու համար հետևեալ ուրախալի նկատողությունը. «Առաջիկայ 1895—96 թուականին հայոց թատրոնը խոստանում է հետաքրքիր լինել։ Պատգրությունները կայ առանց որ և է անտարբերների կամ կոմիտէաների, դերասանների միացեալ ոյժերով տալ մի շարք հայերէն ներկայացումներ Բանկային թատրոնում։ Այս խրախուսանքի արժանի միտքը անցեալ տարի էլ լսվեց, բայց զանազան խոչընդոտների չնորհիւ չիրականացաւ։ Դերասանական խմբի մեծամասնությունը առանձին եռանդով պաշտպանում է յիշեալ գաղափարը։ Արդէն եղել են մի քանի ժողովներ և հարկաւոր բանակցություններ ու հրաւէրներ բացակայ ընկերներին։ Ընկերությունը յոյս ունի համակրություն գտնել հասարակության կողմից, հիմնվելով գլխաւորապէս անսամբլի և բեսերտուարի վրա։ Մեր կողմից ցանկանում ենք լիակատար աջողություն այդ համակրելի մտքին։»

—

Մեզ հաղորդում են, որ Բագուի հայոց հասարակության վրա չատ վատ տպաւորություն է թողել այն լուրը, որ իբրև թէ վճռել են պաշտօնից հրաժարեցնել Բագուի հայոց դպրոցի ատաղ-ուսուցիչ Ա. Գալատեանին, որը ամբողջ 14 տարուց ի վեր բարեխղճությամբ ծառայել է դպրոցին։ Հասարակությունը մտադիր է դիմել Էջմիածին, որպէս զի Գալատեանը մնայ իր պաշտօնի մէջ։

—

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Աւազակությունները մեր կողմերում այս տարի չափազանց չատացել են. օր չէ անցնում, որ մի նոր կողոպուտի կամ սպանության լուր չը հասնի այստեղ։ Նոյն իսկ օր ցերեկով քաղաքից ոչ չատ հեռու մարդ են մորթում կողոպտելու համար»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մեզ մոտ խօսակցության նիւթը սիրողների տուած ներկայացումն է, որը մի այնպիսի տպաւորություն թողեց ժողովրդի վրա, որ դեռ երկար ժամանակ յիշելի կը լինի։ Այդ ներկայացումը տեղի ունեցաւ յուլիսի 26-ին։ Խաղացին առաջին անգամ «Մայրասպան դրաման» և «Անանուն կատակ» վոդէվիլը։ Ներկայացման ժամանակ նուագում էր կօզակների երաժշտական խումբը։ Երգեցիկների երկու սեռի խումբը բաղկացած էր 20 հոգուց՝ քրդական հագուստներով։ Մեզմ, գեղեցիկ ու քաղցր երգերը հրաշալի տպաւորություն թողեցին։ Գեղեցիկ անցաւնան պիեսների ներկայացումը. երևում էր՝ որ սիրողները բարեխղճօրէն էին վերաբերվել իրանց դերերին։ Ներկայացումը բարեգործական նպատակով էր։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

Լոնդոն, յուլիսի 24-ին

Այսօր «Daily News» լրագիրը տպագրել է մի չատ կարևոր հեռագիր իր Կ. Պոլսի թղթակցից, որը չատպում եմ հաղորդել «Մշակի» ընթերցողներին։ Ահա. «Բ. Դուռը հաղորդեց պետութիւններին իր պատասխանը հայկական բէֆորմների ծրագրի մասին։ Դա պարունակում է իր մէջ նկատողություններ Անատոլիայի մի քանի նահանգներում մտցնելի բէֆորմների վերաբերմամբ Շաքիր-փաշայի նշանակելու մասին ոչ մի յիշատակություն չը կայ այդ գրության մէջ։ Նահանգապետների և մութեսարիֆների վերաբերեալ Բ. Դուռը չէ ընդունում, որ նրանք նշանակվեն հինգ տարով և կամ լինեն որ և է ազգությամբ քրիստոնեաներ։ Նոյնպէս և պետութիւնների առաջարկը՝ գայմագամներ նշանակելու մասին Բ. Դուռը մերժում է այն հիման վրա, որ այդ պաշտօնը վարում են կառավարչական դպրոցների աշակերտները, և դրանց մէջ կարող են լինել և քրիստոնեաներ։ Ինչ վերաբերում է միւդիրներին, Բ. Դուռը պնդում է, որ նրանք պէտք է նշանակվեն նախկին ձևով, և որ և է ընտրողական ձևը գործադրելի չէ երկրի համար։ Մի խօսքով, համարեա վարչական հին ձևը պէտք է մնայ անփոփոխ։ Դատաստանական մասի բէֆորմները նոյն կերպ են ընդունվում։ Տեղական դատաւորների նշանակելը չէ կարելի թողնել երկրին՝ ի նկատի ունենալով ներկայ հաղորդակցության դժուար պայմանները։ Խառն ժանդարմերիայի և տեղական ոստիկանության մասին նոյնպէս անհնարաւոր նկատողություն է արված, որովհետև տեղացիք կարող են ունենալ ազգությունների մէջ բարեկամներ և թշնամիներ, և դրանով անկարգություն կարող է առաջանալ։

«Բ. Դուռը, սակայն, յայտնում է, որ նա կարող է օգտվել քրիստոնեաներից ժանդարմերիայի ծառայության համար։ Բ. Դուռը նոյնպէս կարծում է, որ բանտային վարչության ներկայ սիստէմը կարող է դոհացնել այն բոլոր պահանջներին, որ անում է օրէնքը և արդարությունը։ Ինչ վերաբերում է քիւրդերին, պատասխանը գտնում է, որ, հակառակ պետութիւնների կարծիքին, նրանք նոմադներ չեն։ Նրանք անվնաս մարդիկ են, որոնց կառավարությունը պարտաւոր է հավատարել, և որոնց պէտք է հող բաժանվի։ Այն քրիստոնեաների մասին, որոնք գանգատվում են, որ նրանք անարդարացի կերպով հեռացված են իրանց հողերից, Բ. Դուռը ասում է, որ թիւրք կառավարությունը միշտ հրաւիրել է նրանց ապացուցանել իրանց սեփականության իրաւունքները օրինական դատարաններում։ Վերոյիշեալը ճիշդ ամփոփումն է Բ. Դրան պատասխանի։ Այս պատասխանը սաստիկ մեծ զարմանք առաջ բերեց բէֆորմների խնդրով հետաքրքրված անձանց շրջանում»։

Իսկ «Բէյտէրի գործակալության» հեռագրի մէջ Բ. Դրան պատասխանը ներկայացված է իբր դոհացուցիչ։ Սակայն «Daily News» լրագրի հաղորդածի ճշդությանը ապացոյց է և մի ուրիշ տեղեկություն, որը ստացել է Անգլո-Հայկական ընկերությունը և որը տպված է բոլոր լրագիրներում։ Բերում ենք այդ տեղեկությունը, քաղելով «Daily Telegraph» լրագրից։

«Անգլո-Հայկական» ընկերությունը իր Կ. Պոլսի գործակալից տեղեկացել է, որ դիպլոմատական շրջաններում ընդհանուր բաւականություն է արտայայտվում այն առիթով, որ Բ. Դուռը մերժել է իր ամբողջությամբ բէֆորմների ընդհանուր ծրագիրը, որ ներկայացված էր Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից, որը անգործնական էր և մեծ պակասություն ունէր, մանաւորապէս եւրոպական կօնտրոլի վերաբերությամբ։ Այժմ աւելի զօրեղ քայլեր պիտի անեն լորդ Սոլսբիւրիի նախաձեռնությամբ։ Ասում են, որ Ֆիլիպ Կէրրի ստացել է լորդ Սոլսբիւրիից հրահանգ՝ պահանջել թիւրքաց կառավարությունից անմիջապէս և առանց որ և է պայմանի՝ ազատել բոլոր հայ քաղաքական բանտարկեալներին, հոգևորական թէ աշխարհական,—որոնք դատապարտված չեն օրինաւոր դատարաններով։ Նոյնպէս ասում են, որ անգլիական կառավարությունը ապահովել է Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւնների համաձայնությունը՝ դիմել թիւրք կառավարության պաշտօնական յայտագրով և յայտնել, թէ քանի որ նա անընդունակ է իր քրիստոնեայ հպատակների կեանքը և գոյքը ապահովելու՝ պետութիւնները վճռել են նշանակել՝ փոխարքայի իշխանությամբ՝ մի եւրոպացի բարձր կոմիսիոներ Արևելեան Ասիայի նահանգների համար, որը կը կառավարի երկիրը սուլթանի անունով և որը պատասխանատու կը լինի միայն հինգ պետութիւնների առաջ։ Այս նոր պաշտօնի համար տալիս են բարոն Կալլայի անունը, Աւստրո-Ունգարիայի ֆինանսների մինիստր, որը լաւ անուն ստացաւ իբրև Բոսնիայի և Հերցեգովինիայի կառավարիչ»։

Վերոյիշեալ հեռագրի և այս վերջին տեղեկության առիթով «Daily News» լրագիրը ընդարձակ առաջնորդող է նուիրել, որի մէջ խիստ լեզուով յարձակվում է Թիւրքիայի վրա, քննադատելով նրա պատասխանի բոլոր կէտերը։

Այդ յօդուածի վերջաբանը մենք առաջ կը բերենք in extenso. «Թիւրքաց պատասխանից յետոյ հայկական խնդիրը մտնում է նոր շրջան։ Բոլորովին անօգուտ կը լինի այլ ևս որ և է բանակցություններ անել թիւրքաց կառավարության հետ։ Սուլթանը յոյս է դնում մեծ պետութիւնների փոխադարձ մրցման և թշնամության վրա։ Պետութիւններից է կախված ապացուցանել, որ նա սխալվում է։ 17 տարի է անցել այն օրից, երբ Սոլսբիւրին իր անունը դրեց Բերլինի դաշնագրի տակ։ Դրանից յետոյ նա երեք անգամ եղել է արտաքին գործերի մինիստր և երեք անգամ առաջին մինիստր։ Բայց մինչև այժմ նա ոչինչ չէ արել Թիւրքիային զսպելու համար յանուն մարդկության շահերի։ Եթէ մի անկախ պետութիւն իրան պահէր այնպէս, ինչպէս Թիւրքիան, եւրոպական միացած ոյժը կը

միջամտէր արդարացի կերպով, որպէս զի զսպի այդ խայտառակութիւնը: Բայց Թիւրքիան անկախ չէ. նա անկախ է միայն խօսքի բառացի նշանակութեամբ: Թիւրքիան մի անախրօնիզմ է, որը պահպանվում է Եւրոպայի քաղաքակրթված պետութիւնների հնորհիւ, իրանց սեփական շահերի և նպատակների համար: Անգլիան, լորդ Բիկոնսֆիլդի ժամանակ, աղատեց Թիւրքիային Ռուսաստանից: Բերլինի դաշնագիրը այն իսկական աղբիւրն է, որից սուլթանը վերցնում է իր երկիրների ամբողջութիւնը և իր գահի հաստատութիւնը: Նա պէտք է հպատակվի կամ անհետանայ:

Ց. Ք.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, յուլիսի 14-ին

Այս շաբաթ վանեցւոց համար ուրախութեան և ցնծութեան շաբաթ մը եղաւ, վասն զի կայսերական հրամանով (իրատէի սէնիէի շահանէ)՝ քաղաքական պատճառներով բանտարկեալներէն՝ 30-ի չափ անձինք աղատ արձակուեցան: Դոքա են՝ Մ. Մաքսալեաեան, Գարեգին Բաղէշցեան և Աւետիսի հիւան, որոնք երեքն ալ 101 տարվան, այսինքն մշտնջենական բանտարկութեան դատապարտուած էին:

Անոնց հետ աղատ արձակուած է նոյնպէս Աւետիսի տէրտէրը, որ դարձեալ ընդ միշտ բերդարգելութեան վճիռ ընդունած էր և որ քանի մը ամիս առաջ պատրիարքէն կանչուած լինելով՝ Կ. Պոլիս էր գացեր: Աղատ արձակուեցան նոյնպէս Կէնտօեան Յակոբ, որ 12 տարուան կալանքի վճիռ ունէր, Պէօչէօեան Աւետիս, Սեդրակ, Մելքոն, չաուշի լաճ Աւետիս, Սանտրկասլղեան Յակոբ և իր եղբայր, Պաղպանճի Նշան, Զարիճեան, Բամբակչիեան, Յարութիւն Սէլկարպլրօեան, Խաչատուր Նաթանեան, Վահան Սօսօեան և եօթ հատ ալ պօղաղչէսէնցի գիւղացիներ, որք նախորդ 11 քաղաքացւոց պէս 6 տարվան թիապարտութեան (քիւրեկ ճէզասը) դատապարտուած էին: Ազատ արձակուեցան վերջապէս նաև Եսիկեան Միհրդատ, Մալօեան Մովսէս, Պէլէքեան Սահակ, Սէմէրճեան, Շերբօեան, Շալճեան, Ղանդ և Նաղարէթ Կարոցեան, որոցմէ ոմանք 4, ոմանք 3 և ոմանք 1—2 տարուան բանտարկութեան դատապարտուած էին:

Այս բոլորը մէկիկ-մէկիկ կանչուեցան և հոն՝ կուսակալի և տեղոյս պատրիարքական փոխանորդ Սահակ վարդապետի ներկայութեան, խաչի և աւետարանի վրա երդում ըրին միշտ հաւատարիմ մնալ կառավարութեան, ապա բոլորն ի միասին երեք անգամ «Բաթիշահըմըզ չօղ եաշա» գոչելէ վերջ՝ տուներնին դացին:

Ժողովրդի ցնծութեան չափ չը կար. ամեն սիրտ երախտագիտական զգացումներով զեղուն՝ անկեղծ մաղթանքներ կը վերուզղէր պատճառողներուն:

Թէև տակաւին քաղաքական յանցանքներով ամբաստանուած 25-ի չափ քաղաքացի և 20-ի չափ գիւղացի (չատախցի) բանտարկեալներ ալ կան, որք տակուին հիւքմ կերած չեն (իրենց մասին վճիռ տրուած չէ), բայց տեղոյս կուսակալ յայտարարած է, որ ի մօտոյ անոնք ևս ազատ պիտի արձակուին, ինչպէս նաև առհասարակ քաղաքական յանցանքով ամբաստանված կամ դատապարտուած ամեն աքսորեալներ և փախստականներ: Անհին յոյս մը չէ այս, այլ իրողութիւն, վասն զի Համի-պէյ և Ճերմիկօղլի մօլլան, որ աքսորուած էին, վերադարձան արդէն, իսկ Գալիկեան և Սաղոնճեան, որք այն երկուքին հետ աքսորուեցան, ճամբայ ելած են դալու:

Կը հաւատան որ Նաթանեան Կարապետին, Ճէնկիւլեան Յարութիւնին և ուրիշ ասոնց նման. ներուն ալ շնորհուած է կայսերական ամենազորմած ներողութիւն:

Մինչև դալ փօսթային, երբ լրագիրներ ալ դան, ամեն ինչ պարզուած և որոշուած կը լինի:

Կուսակալ Պահրի-փաշա պաշտօնանկ եղաւ: Քանի մը օր հասած հեռագիր մը կը ծանուցանէ, որ կայսերական կառավարութիւն դայն կանչեր է Կ. Պոլիս և անոր փոխարէն յաջորդ նշանակուած է Նաղըմ-փաշա անունով ուրիշ մը, որ անծանօթ է մեզ:

Վանեցի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, յուլիսի 26-ին

Երկու օր առաջ այստեղից դէպի Թէհրան դընաց Թիւրքաց մի արտակարդ դեսպան. նա իր հետ տանում էր զանազան ընծաներ, որ բերել էր սուլթանից, պարսից Շահին ներկայացնելու: Պարզ է, ի հարկէ, թէ ինչ դիտաւորութեամբ է այդ ընծաները սուլթանը Շահին ուղարկում:

Այստեղ տօնվեց Պարսից Շահի ծննդեան 66-դ տարեդարձը: Այդ օրը աչքի էր ընկնում կայսերական բանկը, որտեղ չատ չքեղ ճրագավառութիւն կար:

Մի քանի օրից յետոյ Պարսկաստան կը մտնի Թիւրքաց դեսպանը. ընդունելութեան համար պարսիկ բարձրադիր պաշտօնական անձեր ընդառաջ են գնացել:

Այստեղի դպրոցական խնդիրները մրրկալի դրութեան մէջ են: Ժողովուրդը երկու մասի է բաժանված. երիտասարդները կամենում են դպրոցը երկդասեանի վերածել, իսկ «աղանները» հակառակում են:

Տ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Ամասիա, յուլիսի 17-ին

Թէ պատրիարքարանէ և թէ կառավարութենէն տեղս հասաւ մեզ համար այն ուրախալի լուրը, թէ ընդհանուր հայ բանտարկելոց ազատութիւն է եղած: Սեբաստիա գտնուող մեր բանտարկեալներէ ալ իրենց ազատման հեռագրալուրերը հոս գալով, բաղում սրտեր հրճուանք և ուրախութեամբ լեցուեցան, առաւելապէս այն պատճառով թէ, այս բան տէրութեանց ներկայացուցած ծրագրի գործադրութեան առաջին քայլն պէտք է լինի, և հետևապէս միւս լինելիքներն ալ հետզհետէ կը լինին:

Թէպէտ ծրագրի բովանդակութեան ունեցած յոյժ թերի կողմերն յայտնուած են ուր որ անկ է, և վերջապէս մեր կողմերէն Աքեա և այլուր գտնուող աքսորեալներէ եկած ազատման լուրերը այլ ևս տարակոյս չը թողուցին ատոր, սակայն, արդեօք այդպէս է, կը հարցնենք մենք, արդեօք սա Հայաստանի վրայ ծագելու արեգակին առաջին ճառագայթն է, և վերջապէս մեր բաղմադարեան գերութենէն ազատելու և նորոգ ազատ կենաց մէջ տպրելու առաջին գրաւականն է: Հարցումներ են ասոնք, որ անդադար կը կրկնէ իւրաքանչիւր հայ: Ինչ ալ լինի, սակայն և այնպէս մեր մէջ դեռ կը տիրէ այն գաղափարը թէ, սա Թիւրք խորամանկ կառավարութեան մի ընթացքն է, որով կուզէ մէկ կողմէն հայոց համակրութիւնը չահել, միւս կողմէն հաւատացնել Եւրոպային, թէ ինք իր խոստումը կը կատարէ:

Ի՞նչ աստիճան ստոյգ է այս մեր գաղափարները, չենք կարող բան մը ըսել առ այժմ: Թիւրք կառավարութեան յընթացս ժամանակաց հանդէս բերած պատճառաբանութիւնները և իր տուած և անգործադրելի մնացած բարեկարգութեան վերաբերեալ խոստումները, որ վերջերս գրեթէ ամենն ալ բոլոր աշխարհի առջև պարզուեցաւ, մեր մէջ կը գոյացնեն և աւելի աճում կը գտնեն այդպիսի տարակուսական խորհուրդներ: Միթէ բնական չէ:

Այսօր բանտարկեալները և աքսորեալները ազատ կարձակէ, վաղը մի ուրիշ շլացուցիչ բան կը կատարէ, և արմատական փոփոխութիւններ անգործադրելի մնալով՝ մենք ալ հետևապէս նոյն դրութեան մէջ պիտի մնանք: Այսպէս այսչափ արիւն, այսչափ ձայն կերթայ բոլորովին պարապ, «ձայն բառբառոյ յանապատի»: Քանի որ եւրոպական տէրութիւնք ցարդ որոշ գաղափարի և համոզման չեն եկած ի Հայաստան իրագործելի ո և է բարեկարգութեանց կամ բարենորոգմանց ազդու կամ հակառակ պարագային բռնի կերպով իրենց որոշումները գործադրելու կամ գործադրել տալու մասին, մենք մինչև վերջ պիտի սպդենք մեր համոզման վրայ:

Սուլթանի «ամենաողորմածութենէն» յաւիտեանս չը պիտի օգտուի և իր անտանելի թշուառութեանց դարման գտնէ մեր խեղճ ժողովուրդը: Մինչև հիմա տեսանք իր «հայրական գթութեան» ապացոյցները և ճշմարիտ է, եթէ դեռ այսպէս չարունակէ մի քանի տարիներ, առանց ներկայիս մեզ մի վախճանի և բարեւութեան հասցնելու, վստահաբար կըսեմ թէ չը պիտի գտնուի ալ ոչ մէկ հայ մը, որ բողոք բառնայ սուլթանին և նրա կառավարութեան դէմ:

Երանի թէ սխալուած լինէի:

Ս.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Սալմաստ, յուլիսի 25-ին

Վերջին տարիները, Պարսկա-Հայաստանի խաւար մթնոլորտում նկատելի են լուսաւոր կէտեր, որոնք կամաց-կամաց իրանց ծաւալը ընդարձակելու նշաններ են ցոյց տալիս, մի երևոյթ՝ որ թէ ուրախալի է և թէ միխիթարական: Մի քանի տարի է, որ Սալմաստում գոյութիւն ունի կանանց Բարեգործական ընկերութիւն, որը նուիրադործել են մեր անմահ Բաֆֆիի անունով: Ահա հէնց այդ ընկերութեան մասին է, որ ուզում ենք մի երկու խօսք ասել:

Իսկապէս ասած՝ Պարսկա-Հայաստանի ներկայ տիրող կարգերին նայելով, մի վերին աստիճանի յանդուգն գործ է մի բուռն կանանց կողմից, հարեմական կեանքով ապրող կանանց մէջ ընկերութիւն հիմնել և առաջ տանել մի քանի տարի չարունակ: Սակայն ուրախալի փաստն այն է, որ այդ մի բուռը հայուհիները, արհամարհելով ամեն մի դժուարութիւն, ոչինչ համարելով ամեն նախապաշարմունք, առաջ են տարել ընկերութիւնը:

Սկզբում ընկերութիւնը ունեցել է և՛ Բագու և՛ Բաթում և՛ Թիֆլիս վճարող անդամներ, բայց վերջերս այդ անդամները դադարել են անդամ լինելուց և ընկերութիւնը իր գործը առաջ է տարել տեղական ոյժերով. ինչ ասել կուզի չատ անչան ոյժերով: Ընկերութեան աչքի ընկնող գործն այն է եղել, որ չարունակ երկու տարի, բացառապէս իր միջոցներով, մի օրիորդաց դպրոց է պահել Ղալասար գիւղում, վճարելով դասատու վարժուհու ամբողջ ռոճիկը և հոգալով մի քանի աղքատ աշակերտուհիների դպրոցական պիտոյքները: Ամենահետաքրքիր կէտն այն է, որ ամբողջ գործը առաջ տանողները եղել են ընդամենը երկու կանայք—Խանում-Մայրիկ Հարութեանց և Սուլթան-Խանում Արզումանեանց, որոնք սիրով կոված լինելով գործին, չեն խնայել ոչ մի միջոց ընկերութեան առաջադիմութեան համար: Այս տարի ընկերութիւնը օրիորդաց դպրոցի ձեռագործները վիճակահանութեան դրեց, որից զուտ արդիւնք գոյացաւ 55 թուման, մի գումար, որ միանգամայն անսպասելի էր Ղալասարի նման փոքրիկ՝ 60 տուն ունեցող գիւղի համար: Գովելի էր Ղալասարի ուսուցչի և մի խումբ երիտասարդների բուռն եռանդը, որոնք այնքան աշխատում են թմրած, անկենդան Ղալասարին կենդանութիւն, կեանք ներշնչելու:

Այս առիթով, չենք կարող չը նկատել, որ աւելի նպատակայարմար կը լիներ, որ Ղալասարի Հայուհեաց ընկերութիւնը միանար Թաւրիզի կանանց ընկերութեան հետ և միասին առաջ տանէին կրթութեան և բարեգործութեան գործը, քանի որ երկու ընկերութիւնների նպատակն էլ մի և նոյն է,—նպաստել խաւար պարսկա-հայերի կրթութեան գործին: Մեզ համար միանգամայն անհասկանալի է, որ փոքրաթիւ պարսկա-հայուհիները, Ատրպատականում, կանանց երեք Բարեգործական ընկերութիւն են կազմել... Ծիծաղելի է, ի հարկէ, այդ երևոյթը առաջադիմութիւն համարելը...

Կարևոր ենք համարում աւելացնել, որ Ղալասարի օրիորդաց դպրոցը—Հայուհեաց ընկերութեան միջոցներով—ինչպէս նաև նոյն գիւղի տղայոց դպրոցը Սալմաստի անուանական թեմական տեսչի իրաւասութիւնից դուրս է, և չնորհիւ այդ քանի՝ աւելի ծաղկած, աւելի նպաստաւոր պայմանների մէջ է: Ի դէպ. Սալմաստի թեմական տեսուչ՝ Մ. Աւետիսեանին, դպրոցներ ուսնեցող 7 գիւղերից՝ հինգը—մի-մի գրութեամբ հրաժարեցրել են տեսչութիւնից: Սակայն ժողովրդի այդ արդար իրաւունքը բռնաբարում են Թաւրիզի առաջնորդը և նրա Սալմաստի փոխանորդ Արսէն վարդապետ Վեհունին:

Թեմական տեսչի և նրա «քաջագործ» պաշտպան Սալմաստի յաջորդի հարցին մենք դարձեալ դառնանք մի այլ անդամ առանձին յօդուածով...

Պատրիկ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, յուլիսի 20-ին

Նորերս լուր տարածուեց ամեն կողմ թէ Ուլնիոյ մէջ ապստամբութիւնը իր գլուխ բարձրացուցած է, և զէյթունցիք յաջողեր են դուրս թափել թիւրք զինուորներն ու տիրանալ անոնց ռազմամթերքին: Կըսուի թէ զօրանոցն ալ կրակի տրուած է: Լուրը, բնականաբար, ախորժելի կը հնչէ մեզի, միայն թէ ինչ պիտի ընեն հիմի, երբ Կիլիկիոյ հոգևորական իշխանութիւնը անօրինակ շփոթութեանց մէջ է. առաջնորդութիւնները ամբողջապէս թափուր են, Ալէքսէեանի կաթողիկոսութիւնը կը մնայ անորոշ վիճակի մէջ:

Պատրիարքարանը և ոչ իսկ վայրկեան մը աչքը փակած, իր բոլոր ուժը դրած է գործին վրայ: Ներքին գործոց նախարարութիւնը, Պատրիարքին դիմումներուն վրայ, անմիջապէս հեռագիր քաշած է, որ ո և է հոգևորական արարողութիւն կամ անուանում չըլլայ. հակառակ պարագային, անվաւեր պիտի ճանչուին կատարուած գործողութիւնները: Այս իրողութեանց վրայ պատրիարքարանը քիչ մը հանգստացած է: Բայց թէ ինչ հաւաստիք ունենք չը կասկածելու Դրան ձեռք առած միջոցներուն համար. վասն զի կառավարութիւնը ինքն էր, որ դիւրացուց Կիլիկիոյ եպիսկոպոսներուն ճամբորդութիւնն ու չարժումը պատրիարքարանի դէմ. և գուցէ նոյն օրը, ի բացակայութեան պատրիարքին, ուրիշ հեռագիր մը քաշուի՝ առաջին հեռագիրը ջնջելու:

Ինձի կը թուի թէ պատրիարքարանի միակ օգնութիւնը կիլիկեցի ժողովուրդն կրնայ սպասուիլ: Եթէ յիրաւի կաթողիկոսի անուանում ու օծում ըլլայ, խնդիրը բաւականապէս կնճռոտած կըլլայ ազգաբնակ ժողովուրդին առջև, որ իրաւասութիւն ու նրբութիւնները չի կրնար ըմբռնել. իսկ եթէ, ընդհակառակն, բողոքեն այդ ապօրինութեան դէմ իրենց ողջամիտ գործիչներու ձեռքով, այն ատին ամեն բան դիւրացած է: Եւ սակայն չէք տեսներ, ամեն պարագայի մէջ, դիւական խոչընդոտներ, եթէ նոյն իսկ Ալէքսէեանի կաթողիկոսութիւնը յաջողի: Այդ հոգևորականները, իբրև տեղացի տարը, եթէ երբեք փոքր ի չատէ դժգոհութիւն մը ունենան, իրենց զէնքերը պիտի դարձնեն հոգևորական բարձրագոյն իշխանութեան դէմ: Ենթադրենք որ, ինչպէս կը լսուի, նոր կաթողիկոսը Պոլիսէն տանէ իրեն օժանդակ հոգևորականները, ու իրմէն հեռացնէ կիլիկեցի հոգևորականները: Կարծեմ, մեծ խելքի պէտք չը կայ հետևցնելու, որ աղէտքին ամենէն մեծը այն ատենը կը սկսի կաթողիկոսութեան համար: Այսպէս, ամեն մէկ կէտի վրայ ահագին մթութիւն ու Զէյթունը անդին չարժման մէջ՝ ջղոտ բազուկը. խուժուկ աչքերը վառոդի ծուխին մէջ ազատ կեանքի մը յուսով:

Ա՛յ, դրողը զարնէ սա մեր հոգևորականները: Ամենէն ագեղ խազերը պատրիարքարանի քթին տակ կը խաղցուին: Մանկունի եպիսկոպոս, պատրիարքարանին շրջաբերականը Միջագիւղի եկեղեցիին մէջ կարդացած ժամուն՝ անիրաւ կը գտնէ պատրիարքարանին ընթացքը Կիլիկիայի եպիսկոպոսներու մասին, և իրաւունք կուտայ անոնց: Պատրիարքարանը կը լսէ իրողութիւնը և պաշտօնագրով մը պատասխանատուութեան կը հրաւիրէ: Մանկունի, յանձն չառնելով ներկայանալ հոգևորական ատենին, միայն իր պաշտօնէն հրաժարած ըլլալը կը ծանուցանէ: Բնականաբար. ինչ պէտք ունի. էջմիածնէն կողոպտած հարստութիւնը ողջ ըլլայ. յափտեանս կը բաւէ իրեն:

Ասիկա մէկ:

Յակոբեան Վահան վարդապետ, որ տասը տարիէ ի վեր պատրիարքարանի քթէն բռնած կը խաղայ, տեսնելով որ Ազգային Վարչութիւնը ամբողջութեամբ ձեռք առած է դաւառական առաջնորդութեանց խնդիրը, և այս անգամ ինք չը պիտի կրնայ օձիքը ազատել իր փախուստի միջոցներովը, գաղտնի ոստիկանութեան նախարարին կը դիմէ ու պատրիարքը կամբաստանէ: Իր ամբաստանութիւնը կամիսիոնի սալէս թէ՝ պատրիարքը տեսնելով որ իրեն գործակից եղող կուսակրօն հոգևորականները կը չափատրեն իր ձրգտումները ու տեսակ մը խոչնդոտն են իր ազատ քայլերուն, որոշած է հեռացնել զանոնք դաւառական պաշտօններու պատրուակով, ուստի ինքը, կառավարութեան իբրև հպատակ հաւատարիմ, պարտք կը համարի կանխաւ տալ այդ

տեղեկութիւնները ու կառավարութեան ուշադրութիւնը նուիրել այդ ընթացքի վրայ։—Այս ամբաստանութենէն ետքը, կը խնդրէ որ իր դիտողութիւններն ու ոստիկանութեան դիմումը գաղտնի պահուին, իր անունը դուրս չելլէ, որպէս զի պարբերաբար կարենայ իր հաւատարմութեան ապացոյցները տալ կայսերական կառավարութեան։

Ասիկա՝ երկու։

Եւ այս սրիկայ վարդապետը, պարիարքարանի որոշմամբ, տարիներէ ի վեր քարոզչութեան պաշտօնով կը մնայ Ղալաթիոյ ս. Լուսաւորիչ եկեղեցին, ուր ամենէն առաջ ամսաթոշակը կընդունի, և, չհաշած գումարներովը, արդէն իր հետ բերած ըլլալով Երուսաղէմէն գոյացած դրամները, հիմի կալուածատէր դարձած է։

Յակոբ Աշտ վարդապետներ, հայ ժողովրդին հոգեւոր պէտքերուն ուխտադիր հոգեւորական, մաղը միրուքը ճերմկելու սկսած, տակաւին Պոլիսէն ոտքը դուրս դրած չէ։ Իր բոլոր շնորհքն է օրիորդի պէս հագուիլ, թաղէթաղ ընդունելութիւն գտնել, պատարագ ընել, և միշտ, ապուշ երեսփոխանութեան մը ձեւքով, կրօնական ժողովոյ անդամ ընտրուիլ։ Ասիկա ալ, Վանան Յակոբեանի շարքին մէջ, երբ առաջնորդութեանց խնդիրը լրջօրէն ձեռք առնուած կը տեսնէ, կը դիմէ վարչութեան անդամներուն, և սիրահար աղջկան մը նաղանքով կը խնդրէ որ իր մասին զգուշանալու գտնուի, առարկելով թէ իրենք պիտի երթան և ուրիշներ պիտի գան իրենց տեղը վայելելու։

Ասիկա ալ՝ երրորդ։

Առաջնորդութենէ փախուստ տալու համար մէջ բերուած պատճառները ցարդ միմիայն պատրուակներ եղած են։ Աշըգեանի օրով կառարկէին թէ, քանի որ երկրին վիճակը ամեն կողմ անապահով դրութեան մէջէ ու պարիարքարանն ալ մեծ զօրութիւն մը ի հանդէս չի բերեր իր առաջնորդները պաշտպանելու, և քանի որ ամեն բան տակն ու վրայ է, իրենք երբէք յանձն չեն կրնար առնել գիտութեամբ նետուիլ կրակներուն մէջ. թող պարիարքարանը իր պարտականութիւնները կատարէ. և իրենք ալ պատրաստ են հնազանդելու դիրենք կոչող ժողովրդային ձայնին։

Այդ դիտողութիւնները հիմի ուժ չունին Մատթէոս պարիարքի մասին. պարիարքարանի իրաւասութեան բոլոր ուժովը զինուած է ան. և իրենք ալ մօտէն տեղեկութիւն ունին։ Ուստի ինչ պիտի ընէին.—առարկութեան տեղ՝ ամբաստանութեան ու դատաճանութեան դիմել, կանացի քնքշանքով՝ գութ շարժելու դիմել իրենց վիճակին վրայ։ Վասն զի, այս ամեն պատրուակներուն ու տկարութեանց ներքև՝ կանացի սիրուն, շնորհագեղ պատկերներ կան պահուած. սիրահար սրիկաներ են ատոնք. այդ պարագան է, որ կաչկանդած է զիրենք ոսկի թելերով։ Եւ ալ ինչ պէտք ունին, քանի որ պօլսեցի տունները թաղումի կը հրաւիրեն զանոնք, խաչանգատի կը կոչեն, սեղանի, հարսանիքի կը տանեն. զիշերային ու ցորեկուան ընդունելութեանց համար՝ ներքին ու արտաքին դուռները կը բանան, ու հայոց պատրիարքարանն ալ, մինչև վերջին ամիսները, անոնց քարոզչական պաշտօն տուաւ, զանոնք իրեն խորհրդական ըրաւ, ու, աչքերուն բիբերուն պէս, ամեն խնամքով նայեցաւ։

Իմ հաշուով, սխալ դրութիւն մը է այսուհետև այդպիսի կոչում չունեցող հոգեւորականները դատական պաշտօններու զրկել։ Դատական առաջնորդութիւնը պատիժ մը նշանակուած է, ինչ որ, ընդհակառակն, պէտք է վարձատրութիւն համարուէր։ Եւ այդ դրութեան մէջ, տակաւին այսօր ալ ակներև կը տեսնուի թէ ինչ նշանակութիւն ունի դատաւորը Պոլսի հասոններու աչքին։ Թող իրենց պահեն այդ հոգեւորականները, թող տունէրնին ու դուռներնիս բանան անոնց առջև. դատաւորը քաւարան չէ։ Իսկ եթէ Ազգային վարչութիւնը կուզէ լրջօրէն բան մը ընել, թող նախ իր քթին տակ գտնուած եկեղեցիներէն դուրս թափէ զանոնք, զրկէ վանքերը ուշխար պրծելու, խոզեր ու կովեր պահելու։ Դատական առաջնորդութեանց համար ալ՝ թող նըշանակէ կոչում ունեցող մարդիկ։ Մեզի բնաւ պէտք չեն սիրահարներ, սրիկաներ, դատաճաններ։

Վարդ

ԱՄԵՆ ՄԱՐԴ ԻՐ ԳՈՐԾԻՆ

—

Հինգշաբթի օրուան դրական գայթակղութենէն ետքը Իզմիրեան մրցանակը տխուր այժմէութիւն մը ստացած է։

Ինչ տեսակ գործեր կը տեսնէ այդ կտակին գործադիր յանձնաժողով, որ ոչ գիտէ ընտրել այն անձերը, որոնց քննութեանը ենթարկելու է մրցանակի ներկայացող գործերը, եւ որ, պատահաբար լաւ ընտրութիւն մը ըրած ատենն իսկ, կարող չէ քննիչին տեղեկագրին իմաստը ըմբռնել եւ անոր համեմատ բաշխել վարձատրութիւնը։

Ինչ որ առաջին անգամ ապշեցուցիչ կը նկատուի արդիւնքին նայելով, շատ բնական պիտի երեւայ սակայն պատճառներուն հետազօտութեամբը։ Այդ յանձնաժողովին կազմութիւնը ինքնին կարդարացնէ ամէն բան. այդպիսի սկզբունքէ մը այդպիսի հետեւանք միայն կարելի է սպասել։

Յանձնաժողովը կը բաղկանայ երեք եկեղեցականէ եւ երեք աշխարհականէ։ Այդ վեցին մէջ հազիւ մէկը կրնաս գտնել որ բարձրագոյն ուսում առած ըլլայ, ան ալ այնպիսի նիւթերու մասին, որոնք գրականութիւններէն ու բանասիրութենէն տարբեր բաներ են։ Մնացեալները ինչ կընեն այդտեղ, ինչ բան ունին հոգ։ Զորոը անսխալ հայերէն մը գրել չեն գիտեր, իսկ մէկը հայերէն բառ մը չի գիտեր։

Թող չըսուի թէ անհրաժեշտ հարկ մը չի կայ որ յանձնաժողովին անդամները մէկ մէկ բանասէր ըլլան, քանի որ ներկայացուած գործերը ձեռնհասներու քննութեան պիտի դրկին։ Թերեւս. բայց գոնէ անդամները բանասիրութեան վրայ գաղափար մը ունենալու են, իրենց ընտրութեան մէջ առաջնորդուելու համար։ Ու յետոյ, իրապէս, իրենք են որ էն վերջը վճռական դատաստանը կընեն ներկայացուած գործին արժէքին վրայ։ Ասկից առաջ մէկ գործը մէկ քանի քննիչի կը զրկէին, եւ անոնց տեսութիւններուն վրայ կը ձգէին իրենց եզրակացութիւնը. անանկ որ յանձնաժողով, իրաւ, քննիչներուն վրայ բարձրագոյն քննիչի մը դերը ստանձնած է։ Ասիկա այնչափ իրաւ է որ ուրբաթ օր տեսանք թէ յանձնաժողովը յայտնապէս ուելորդ դատած էր համակերպիլ քննիչի մը բացորոշ ու անտարակուսելի եզրակացութեանց։

Յանձնաժողովը արդէն իրեն սկզբունքներ դրած է, որոնք բանասիրութեան հետ հեռուէն կամ մօտէն ոչ է յարաբերութիւն չունին։ Ինչ է ան կրօնքի խորութիւնը որ կը նախագահէ իր գործերուն։

Վենետիկի Մխիթարեան մը, հ. Բարսեղ Սարգսեան, ահա երկու տարի է որ յանձնաժողովին զրկած է Ագաթանգեղոսի վրայ ընդարձակ ուսումնասիրութիւն մը որ, շատերու կարծիքով, կարեւոր գործ մըն է։ Անցեալ տարի յետաձգեցին զայն, պատրուակելով որ ուշ հասած է յանձնաժողովին ձեռքը, և այս տարի անոր խօսքը անգամ չիմացուեցաւ։

Նոյն բանը չը պատահեցաւ նաև Վիեննայի Մխիթարեանի մը, հ. Գ. Գալէմքեարեանի «Հայ լրագրութեան պատմութեան» համար, որ այդ նիւթին վրայ գրուած էն կատարեալ էն ստուգութեան ամենէն աւելի մօտեցող գործն է։ Ան ալ մէկդի դրուեցաւ յանձնաժողովէն, որ, ի փոխարէն, ելաւ վարձատրեց Պ. Գարեգին Չիւանի Լեւոնեանի «Հայոց պարբերական մամուլը», կարապետ էֆ. Իմիւճեանի տեղեկագրին վրայ։ Այդ գործը վերջերս հրատարակուեցաւ Թիֆլիզ, և կուզէի որ կովկասեան մամուլին և ձեռնհաս բանասէրներու անոր վրայ տեղացուցած քննադատութիւնները քիչ մը տեսնէր մեր յանձնաժողովը։ Ամենքը միաբերան կը յայտնեն թէ արեւմտեան հայոց գրական համբաւին համար «կատարեալ ամօթ մըն է այդ գրքին վարձատրումը»։ Եւ Պ. Աղեքսանդր Երիցեան, որուն հեղինակութիւն տարակոյսէ վեր է, մանաւոր նամակի մը մէջ թարգման կանգնելով Կովկասի գրական շրջանակներուն դժգոհութեանը՝ կը յայտնէ որ եթէ այսպէս շարունակուելու ըլլայ, պիտի աշխատին Իզմիրեան կտակը բաշխելու պաշտօնը Պոլիսէն առնել։

Սխալ մը ուրիշ սխալներու կառաջնորդէ։ Հ. Գալէմքեարեանի գործը վարձատրել չուզելով, տիպաւեցան մրցանակ շնորհել ապիկարի մը որ չորս հայերէն թերթ քով քովի տեսած չէ և որուն գրուածքը խճողակ մըն է սխալներու և ոնայնաբանութեան։

Բանասիրութիւնը կրօնք ունի եղեր։ Ահա մեր յանձնաժողովին գիւտը։

Ուրիշ գիւտ մըն ալ, որ առջինէն վար չի մնար։

Յանձնաժողովը եթէ ուրբաթ օր մրցանակէն բաժին մըն ալ Պոլսոյ հայու մը հաներ է, պատճառը այն է եղեր որ այս քանի տարի է մրցանակ ստացողները բոլորն ալ արեւելեան հայերէն են, և թէ, տեղական բանասիրութեան պատուին համար, պէտք է եղեր որ...

Չէ, ալ կարելի չէ շարունակել։

Դիտեր էք որ մեր բոլոր այն հանրային գործերուն մէջ, որոնք դրամի կապուած են, անխուսափելի կերպով նոյն մարդիկն են որ եկած վրան հեծած են։ Բայց այս պարագային մէջ՝ պէտք չի կար գործի գլուխ կանչելու էն ճարպիկ վաճառականները կամ սեղանաւորները։ Բեղրպուրկի Պանքային մէջ ամրապէս պահպանուած տարեկան 60 ոսկին ալ աւելի ուժով պահպանելու համար՝ չարժեր ծաղրելի ընել մէկ քանի հոգիներ մէկէն։

Թող ամէն մարդ իր գործը տեսնէ, ամէն մարդ իր տեղը գիտնայ։ Եթէ ոչ, իր արժանապատուութիւնը գիտցող ոչ ոք պիտի ուզէ այլ ևս իր գործը ենթարկել այդ խմբակին գնահատմանը։

«Հայրենիք»

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 օգոստոսի։ Կրանսօե-Սելօում կայացաւ, Թագաւոր Կայսրի և Թագուհու Կայսրուհու ներկայութեամբ, զօրքերի դրօշակների օծումը։ Նոցա Մեծութիւնները վերադարձան Պեսերհօֆ։

ԿԱԶԱՆ, 2 օգոստոսի։ Այստեղ հասաւ երկրագործութեան մինիստրը։ Այստեղից նա կերթայ Պերմ և Պետրոզավոդսկ։ Եկաւ նոյնպէս հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։

ՕԴԷՍԱ, 2 օգոստոսի։ Զինուորական մինիստրը «Էրեկլիկ» նաւով ճանապարհ ընկաւ Կովկաս։ Մինիստրի առողջական դրութիւնը շատ լաւ է։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 2 օգոստոսի։ Լրագիրներում հաղորդում են, որ Եալտինայում ծագեց մինիստրական ճգնաժամ որովհետև Իսօ և Եամագատա կոմսերը հրաժարվեցին ընդունել իրանց շնորհված մարկիզի տիտղոսը, եթէ իրանց ընկերակիցներից մի քանիսը պարգևներ չեն ստանայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 օգոստոսի։ Երկրագործութեան դեպարտամենտը հաղորդում է, որ սեպտեմբերի 4-ին (16-ին նոր տօմարով) տեղի կունենայ Բրիւսէլում երկրագործական միջազգային կոնգրէս, ուր Ռուսաստանը կունենայ պաշտօնական պատուիրակներ։

ՍՕՖԻԱ, 3 օգոստոսի։ Կօբուրգեան պրինցը երէկ ընդունեց Պետերբուրգում եղած բուլգարական պատգամաւորութիւնը։ Ընդունելութիւնը տևեց $1^1/_2$ ժամ։

ՍՕՖԻԱ, 2 օգոստոսի։ Բուլգարիայի կառավարութեան Կօբուրգեան պրինցի ձեռքն անցնելու տարեդարձի առիթով տեղի ունեցաւ զօրահանդէս՝ իշխանութիւնների և հոգեւորականութեան ներկայութեամբ։ Միտրօպոլիտ Կլիմէնտ դիմեց մի ճառով պրինցին։

ԲԵԼԳՐԱԴ, 2 օգոստոսի։ Թագաւորի ծննդեան առիթով, պատարագ մատուցվեց, մաղթանք կատարվեց տաճարում և մեծ ընդունելութիւն տեղի ունեցաւ պալատում։ Բազմաթիւ չքնաղ նվերներ և ուրիշ պարգևներ են շնորհված։ Հինգշաբթի թագաւորը և թագուհի Նատալիան ճանապարհ են ընկնում Բիարրից։

Խմբագիր և հրատարակիչ՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Դ. Գ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՂԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7^1/_2$ ժ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

ԲԺՇԿԱՊԵՏ ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՑԵԱՆԻ
բացակայութեան պատճառով
նրա
ԶՐԱ-ԷԼԷԿՏՐԱԿԱՆ
ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ
(Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց, № 14)
Ամառվայ ընթացքում հիւանդներին կընդունի
ԲԺՇԿԱՊԵՏ
ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՑ
կանանց և ջղային հիւանդութիւնների
Ամեն օր, 1—2 ժ. ցերեկվայ և 7 ժամ երեկոյեան
Բուժարանում, բացի էլէքտրական վանաներից, դուշերից, բժշկական մարմնամարզութիւնից—կին հիւանդների մասաժ, որի համար ընդունելութեան ժամերին սերկայ են լինում կին և տղամարդ մասաժիստներ.—մասաժիստ ԽՈՍՐՕՎԵԱՆՑ և կին մասաժիստ ԿՐԱԵՎՍԿԱՅԱ։
(№ 71) 13—30

Մեծ Արժանաւորութեան
ՀՈՏԱՒԷՏ ՋՐԵՐ
"Պարսկական Եաասման"
Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն
„Պարսկական Եաասման“
Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եաասման“
Սապոն „Պարսկական Եաասման“
Պոմադա „Պարսկական Եաասման“
Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Պրէյս-կուրանտը ձրի։
(ամ. 30) (№ 73) 3—12

ՊԵՏՐՕՎՍԿԻ
ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ համար հարկաւոր է ցենզ ունեցող վարժուհի հայոց, ռուսաց լեզուների, թուաբանութեան, ձեռագրծի, գծագրութեան և գեղագրութեան դասերի համար. շաբաթական 22 դաս, վարձատրութիւնը 440 ռուբլի, կամ 16 դաս (առանց հայոց լեզուի)—400 ռուբլի։ Զրի կունենայ սենեակ (դպրոցում) ծառայող, վառելիք և լուսաւորութիւն։
Յանկացողները կարող են դիմել. Петровскъ, Дагест. обл. священнику Аршену Маркарьянцъ.
(№ 87) 2—2

ԱԶԴ
ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, որ դպրոցում նորեկ աշակերտների ընդունելութիւնը սկսուելու է օգոստոսի 20-ից։
Հերթակալ հոգաբարձու՝ Կ. Քոչարեանց

ԹԱՒՐԻԶԻ
ԼԻԼԱՎԱ թաղի դպրոցի համար հարկաւոր են ուսուցիչներ։ Պայմանների մասին դիմել՝
Баронская ул. домъ № 15
(№ 87) 2—3

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Վելիամինովսկայա փող. № 3)

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

կը սկսվի օգոստոսի 23-ից (9 ժամից մինչ 1 ժամ կէսօրից յետոյ և 6 ժամից մինչև 8 ժամ երեկոյեան): Մանուկներն ընդունվում են նախապատրաստական բաժանմունքներում (հայոց և վրաց), կրտսեր, միջին և աւագ: Աւագ բաժանման մէջ վերջնականապէս պատրաստվում են մտնելու համար բոլոր միջնակարգ դպրոցների սարքին դասատները:

Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 1-ին:

(№ 87) (5, 21, 23, 28 և 30 օգ.) 1—5

„ՇԱՒԻՂԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Թէհրանի „Շաւիղ“ շաբաթաթերթի խմբագրութիւնը յայտնում է բոլոր հայ հեղինակներին և հրատարակիչներին, որ իրան ուղարկված գրքերի համար „Շաւիղը“ կը յայտարարի և յանձն կառնի Պարսկաստանում տարածելու աշխատութիւնը: Գրքեր և հրատարակութիւններ պէտք ուղարկել մի մի օրինակ խմբագրութեան: Խմբագրութեան հասցէն է. Rédaction „Chavigh“ Téhéran (Perse) (№ 87) 1—5

ԿԷՕԼԵՐԵԱՆ Z-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՕԾԱՆԵԼԻՔ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ նշանաւոր առևտրականների մօտ

Ինչպէս Z տառը վերջինն է այբենարանում, այնպէս էլ կարելի է ասել, որ այդ օծանելիքը ներկայացնում է պարֆիւմէօրային արուեստի վերջին խօսքը:

Կէօլերեան Z—անուշահոտ օծանելիքը, չը նայելով իր ամբողջ քնքշութեանը, շատ խտացած է և այդ պատճառով նրա ախորժելի հոտը զարգանում է կամաց-կամաց գործածվելուց յետոյ և ապա մնում է մի քանի օր: (№ 88) 1—2

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, ընդլայնուրելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի խոսական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, համդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:

Բ) Առևտրական թուաբանութիւն.

Գ) Առևտրական նամակագրութիւն.

Դ) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 4 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՈԼՈԼԱԿ, Ֆրէյլինեան փողոց, տուն Սուլխանովի, № 13:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիտտէկեկի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում:

ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ:

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու:

(№ 86) (Հ. շ.) 2—15

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկաք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիտօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(Ե. շ.) № 62 6—25

ԳՈՐԾԱՐԱՆ

Գ. ԵՒ Վ. ՄԱՐԳԱՐԵԱՆՆԵՐԻ

Տեօպլից բռադի, Ալէքսանդրօվսկայա լինիա, № 107—108

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ.

ՋԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ՄԵՏԱՔՍԷ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

Սադա և ծաղկաւոր մախմուր, պլիւշ, լենտ-դօտիկ, ճակատանոց, գլխի աղլուխ, բարձի երես, պլիւշի գորգ, և այլն:

ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ. Գանօվսկայա, № 31, Յ. Գ. Մարգարեանի մօտ:

(№ 79) 5—10

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՄԷՍԱԺԷՐԻ ՄԱՐԻՏԻՄ“—MESSAGERIES MARITIMES

Առաջիկայ շաբաթ, օգոստոսի 12/24-ին, մեկնելու է Բաթումից սոյն ընկերութեան „Labourdonnais“ շոգենաւը դէպի Կ. Պօլիս, Մարսէյլ, Հավր և Լօնդօն:

Տոմսակներ՝ ուղղակի հաղորդակցութեան մինչև Պարիզ, կարելի է ստանալ Թիֆլիսում՝ պակասեցրած գներով:

Նոյնպէս արտասահման ապրանքներ փոխադրելու մասին հարկ եղած տեղեկութիւնների համար, դիմել սոյն ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Պուպպօ-ին, Դվորցովայա փողոց, քարվանսարայ նախկին Արծրունի № 127. 1—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է գիշերօթիկ և երթևեկ աշակերտներ. պատրաստում է գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ ուսումնարանների համար: Գիշերօթիկները կապրեն և կուսանեն Բօրժոմ ամարանոցում, իսկ երթևեկները Թիֆլիսում: Ցանկացողները կարող են որդոց տալ՝ Բօրժօմ ամարանոց տանելու համար:

Հասցէն. ТИФЛИСЪ. Сололаки. Гановская ул., № 11, կամ БОРЖОМЪ, дача Романова, Пансiонъ Тѣръ-Акопова. (№ 65) 6—10

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ից ԿՐԿԻՆ ԿԸ ՍԿՍՎԻ ՈՒՍՈՒՄ

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԵՒ ՁԵՌԱԳՈՐԾԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

որը գտնվում է իշխ. Արղութեանի տան վերին յարկում, անկիւն Միջէի փողոցի և Երևանեան հրապարակի:

Նոյն տեղը, շաբաթը մի անգամ տալիս են ՊԱՐԻ ԴԱՍԵՐ: Ցանկացողները կարող են այժմեանից պայմանաւորվել: (№ 86) 2—5

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՕՅԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՕՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ: ԿԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՅՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՋԱՅՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս:

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманiана, ТИФЛИСЪ, Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.

(№ 35) 5—20



№ 120. 90 թ.

(Կ) 34—50

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻՉՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ“ Ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօլօնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլօգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվէրպէնի համաշխարհային ցուցահանդէսում 1894 թւին: (№ 151) 45—50

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Августа 1895 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.